30 ՆՈՅԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 209(5292)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

## «Հայաստան» հիմնադրամի 16-րդ հեռուստամարաթոնը հավաքագրել է ավելի քան 22, 6 միլիոն ԱՄՆ դոլարի նվիրատվություն եւ նվիրատվության խոստում

Հեռուստամարաթոն 2013-ը հավաքագրեց 22 661 372 ԱՄՆ դոլար, որը կնպատակաուղղվի Հայաստանում եւ Արցախում մի շարք ծրագրերի իրագործմանը եւ գլխավորապես Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից տարվա ռազմավարական ծրագիր ճանաչված շուրջ 116 կմ երկարությամբ Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի կառուցմանը:




Ստորեւ ներկայացված է հեռուստամարաթոն 2013-ի հանգանակությունների նախնական բացվածքը` ըստ երկրների:

Ռուսաստան` 12 350 000 ԱՄՆ դոլար

ԱՄՆ Արեւմտյան շրջան (Լոս Անջելես)` 2 000 000 ԱՄՆ դոլար

Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, Հոլանդիա, Հունաստան, Բելգիա (համաեվրոպական հեռախոսամարաթոն)` 1 984 000 ԱՄՆ դոլար

Հայաստան` 1 648 372 ԱՄՆ դոլար

Շվեյցարիա (անհատ-բարերար)` 1 250 000 ԱՄՆ դոլար

Արցախ` 1 000 000 ԱՄՆ դոլար

ԱՄՆ Արեւելյան շրջան (Նյու Յորք)` 1 000 000 ԱՄՆ դոլար

Արգենտինա` 700 000 ԱՄՆ դոլար

Տորոնտո (Կանադա)` 225 000 ԱՄՆ դոլար

Բրազիլիա` 170 000 ԱՄՆ դոլար

Մոնրեալ (Կանադա)` 120 000 ԱՄՆ դոլար

Մեծ Բրիտանիա` 100 000 ԱՄՆ դոլար

Լիբանան` 94 000 ԱՄՆ դոլար

Իրան` 60 000 ԱՄՆ դոլար

Ավստրիա` 10 000 ԱՄՆ դոլար

## Համաձայնություն եվրոպական մոդելով առաջ շարժվելու

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ



«Վիլնյուսի գագաթաժողովի հռչակագրով մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը` շարունակելու նոր թափ հաղորդել մեր երկրներում իրականացվող բարեփոխումներին», Արեւելյան գործընկերության պետությունների ղեկավարների երրորդ վիլնյուսյան գագաթաժողովի լիագումար նիստի իր ելույթում հայտարարել է աշխատանքային այցով Լիտվայի Հանրապետությունում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Ըստ պաշտոնական հաղորդագրության` Հայաստանի նախագահը նշել է, թե վիլնյուսյան գագաթաժողովից ակնկալիքները մեծ են: Նրա խոսքերով. «Մենք այս գագաթաժողովը դիտում ենք որպես ԵՄ-ի հետ մեր հարաբերություններն առավել իմաստավորված եւ իրատեսական հիմքերով զարգացնելու կարեւոր հանգրվան: Հենց այդ համատեքստում ենք մենք ընթերցում գագաթաժողովի եզրափակիչ փաստաթուղթը եւ այսօր ստորագրվելիք Հայաստան-Եվրոպական միություն հռչակագիրը»:

Տվյալ պարագայում դժվար է հասկանալ, թե Հայաստան-ԵՄ ինչ հռչակագրի մասին է խոսել Հայաստանի նախագահը, քանի որ որպես հռչակագիր ստորագրվել է ընդհանուր, այլ ոչ երկկողմ փաստաթուղթ, իսկ այն, ինչ ստորագրվել է Հայաստան-ԵՄ ձեւաչափով, համատեղ հայտարարություն է, ըստ որի «Եվրոպական միությունն ու Հայաստանը արձանագրում են, որ ավարտել են Ասոցիացման համաձայնագրի, այդ թվում` Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու շուրջը բանակցությունները, սակայն չեն նախաստորագրելու այն, քանի որ Հայաստանն ունի նոր միջազգային հանձնառություններ»:

Համատեղ հայտարարությունը նաեւ ընդգծում է, որ Հայաստանն ու Եվրոմիությունն ամենից առաջ վերահաստատել են իրենց հանձնառությունը` «ավելի զարգացնել եւ ամրապնդել Արեւելյան գործընկերության շրջանակներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում համապարփակ համագործակցությունը»:

*Տես էջ 3*

## Արտակ Շաբոյանը համաձայն չէ Համաշխարհային բանկի եզրակացությանը




Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը համաձայն չէ Համաշխարհային բանկի ուսումնասիրության այն եզրակացությանը, ըստ որի ԱՊՀ այլ երկրների համեմատ Հայաստանում տնտեսության վրա մենաշնորհների ազդեցությունը շատ բարձր է: Նա նշեց, որ ՀԲ մասնագետներն ուսումնասիրել են մեր տնտեսության 30 տարբեր ոլորտներ եւ այդ ոլորտների մրցակցային վիճակը: Համաձայն ներկայացված զեկույցի` այդ ոլորտներից 16-ում կենտրոնացվածության աստիճանը խիստ ցածր է: Դրանց թվում են սննդարդյունաբերությունը, թեթեւ արդյունաբերությունը, դեղագործությունը, մանրածախ առեւտուրը, շինարարությունը, որոնք մեր երկրի համար կարեւոր կենսական եւ սոցիալական նշանակություն ունեն:

ՀԲ-ի ուսումնասիրած մյուս ոլորտներից Արտակ Շաբոյանն առանձնացրեց բնական մենաշնորհները` էլեկտրաէներգետիկան, գազը, նշելով, որ դրանք խստորեն կարգավորվում են պետության կողմից: Հեռահաղորդակցության ոլորտում երեք խոշոր ընկերություններ ունենք, որոնք լիցենզավորվում են: Ըստ հանձնաժողովի նախագահի` այնպիսի ոլորտում, ինչպիսին, օրինակ, հանքարդյունաբերությունն է, տնտեսվարողների թիվն օբյեկտիվորեն պետք է սահմանափակ լինի, որովհետեւ այդ ոլորտներում ներդրումներ իրականացնելու համար հսկայածավալ միջոցներ են պահանջվում:

«Այդ ոլորտներում տնտեսվարողների թիվն օբյեկտիվորեն սահմանափակ է, եւ սրանք այն ոլորտներն են, որտեղ ավելի մեծ արժեք է ստեղծվում, եւ դրանք ավելի մեծ կշիռ ունեն տնտեսության ծավալներում: Դրանց ստեղծած արժեքը համեմատել տնտեսության ծավալների հետ ու դրա հիման վրա եզրահանգում կատարել կենտրոնացվածության աստիճանի վերաբերյալ` մենք կարծում ենք, որ ճիշտ չէ», ասաց Արտակ Շաբոյանը:

ՀԲ-ի նույն զեկույցում անդրադարձ է կատարված Հայաստանի մրցունակության ինդեքսին, որը հրապարակվել է համաշխարհային մրցունակության ֆորումի կողմից: Ըստ Արտակ Շաբոյանի` տարիներ առաջ այստեղ բավականին ցածր դիրքերում ենք եղել, բայց վերջին 3 տարիների ընթացքում մրցակցության ոլորտում կատարված փոփոխությունների, բարեփոխումների, հակամենաշնորհային քաղաքականության ուժեղացման արդյունքում Հայաստանը բավականին մեծ առաջընթաց է արձանագրել եւ «համենայն դեպս` ԱՊՀ երկրների շարքում մենք առաջատար ենք»:

Արտակ Շաբոյանը խոստացավ առաջիկայում հանդես գալ ավելի մանրամասն անդրադարձով ՀԲ ուսումնասիրության առնչությամբ:

**Ա. Ս.**

## Վաշինգտոնի կենտրոնում ազատ տարածություն




«Վաշինգտոն բիզնես ջոռնըլի» լրագրողներից Մայքլ Նեյբաուրը տեղեկացնում է, որ Գաֆեսճյան ընտանիքի հիմնադրամին թույլատրվել է հիմնահատակ քանդել երեք առեւտրական կառույցներ քաղաքի կենտրոնում` ազատելով հսկայական մի տարածք, 14-րդ փողոցի հարեւանությամբ, որտեղ ժամանակին գործել են «Կլեմենսի հրուշակեղենի», «Գրաֆիքս տատուի» (դաջվածքի) եւ «Բենտոնիսի իտալական խոհանոցի» խանութները:

Քայքայված ճանաչված եւ արդեն որոշ ժամանակ դատարկ այդ երեք շինությունները Վաշինգտոնի 14-րդ փողոցում պատմական Ազգային բանկի (Bank of Armenia) անմիջական հենքին են եւ պատկանում են Գաֆեսճյան հաստատությանը, որը այդ եւ բանկի շենքը գնել էր 2000 թվին` ժամանակակից արվեստի թանգարան կառուցելու մտադրությամբ:

Բացի դրանից` թանգարանը կառուցվեց Հայաստանի մայրաքաղաք Երեւանում, եւ Գաֆեսճյանը պայմանականորեն համաձայնեց դրանք հանձնել Ամերիկայի հայկական համագումարին, որպեսզի Ցեղասպանության թանգարան կառուցվի այնտեղ: Պայմանը` մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը ավարտել աշխատանքները: Բայց պայմանը չկատարվեց, եւ դատական քաշքշուկների առարկա դարձավ կալվածը:

Թե ի՞նչ է լինելու այդ վայրում, դեռեւս հայտնի չէ: Սակայն մի բան հստակ է, որ արդեն քանի տարի «ոչ մի առաջընթաց չի արձանագրվում այդ գործում», եզրակացնում է Նեյբաուրը:

**Հ. Ծ.**

# Տուգանքներ «հիմար մարդ» արտահայտության, «Իդեալ գազ» ապրանքային նշանի եւ կաթի փոխարեն թանի համար

«Իդեալ գազ», «Բոնիլաս» եւ Nout.am ընկերություններին երեկ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը տուգանեց անբարեխիղճ գովազդի եւ հասարակությանը մոլորեցնելու համար: Տուգանքը կկազմի յուրաքանչյուր ընկերության նախորդ տարվա հասույթի 1 տոկոսը:

«Էյջ Թի Էլեքթրոնիքս» ընկերությունը դիմել է հանձնաժողովին՝ հայտնելով, որ մրցակից Nout.am ընկերությունը համացանցում տեղադրել է վարկաբեկող տեղեկատվություն իրենց պատկանող «Ռիչֆոմփյութերս» ապրանքանիշի վերաբերյալ: Մասնավորապես՝ Nout.am-ը տարածել է, որ իբր հաճախորդներից մեկը միջին որակի նոութբուքը «Ռիչֆոմփյութերսից» գնել է 365 000 դրամով, մինչդեռ իրենց մոտ արժե 209 000 դրամ: «Հիմա դուք երեւի կմտածեք՝ «խեղճ մարդ», բայց հավատացեք, այդպիսի հիմարներին հենց էդպես էլ պետք է», իր գրառումն այսպես է եզրափակել Nout.am-ը, ինչն ակնհայտորեն հակասում է օրենսդրությանը: Հանձնաժողովի պահանջով գրառումն անմիջապես հանվել է համացանցից, իսկ ընկերությունը կվճարի տուգանք՝ օրենքի խախտման եւ մրցակից ընկերությանը վարկաբեկելու համար:



«Իդեալ», «Իդեալ համակարգ» ապրանքային նշանները մտավոր սեփականության գործակալությունում գրանցած «Իմէքս գրուպ» ընկերությունը դիմել է հանձնաժողովին, տեղեկացնելով, որ մեկ այլ ընկերություն՝ «Իդեալ գազ» անվանումով, «Իդեալ» ապրանքային նշանի ներքո իրականացնում է առեւտրային գործունեություն՝ խախտելով իրենց իրավունքները: Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում հանձնաժողովը պարզեց, որ «Իդեալ», «Իդեալ համակարգ» ապրանքային նշաններին շփոթության աստիճան նման «Իդեալ գազ» եւ IDEAL GAS նշանների օգտագործումը սպառողների մեջ շփոթություն է առաջացնում, ինչը համարվեց անբարեխիղճ մրցակցության դրսեւորում է, իսկ «Իդեալ գազը» տուգանվեց:

«Բոնիլաս» ընկերության արտադրած 1-լիտրանոց շշով ապրանքի վրա գրված է եղել՝ 100% pasteurized milk՝ պաստերացված կաթ, սակայն հետազոտում պարզվել է, որ շշի մեջ ոչ թե կաթ է, այլ՝ թան: Այդ մասին հանձնաժողովը տեղեկություն է ստացել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցչից, որի դիմումի հիման վրա հարուցել է վարչական վարույթ: «Բոնիլաս» ընկերությունը հայտնել է, որ «թան» ապրանքատեսակի պիտակի վրա առկա գրառումները ճշգրտվել են, եւ ներկայացրել է ապրանքատեսակի նոր՝ փոփոխված պիտակի օրինակը: Այդուհանդերձ, «Բոնիլաս» ընկերության վարքագիծը անբարեխիղճ մրցակցության դրսեւորում է համարվել, եւ վերջինս նույնպես տուգանվել է:

Հանձնաժողովի նիստի ժամանակ նշվեց նաեւ, որ գովազդային շուկայում ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ մի շարք դեպքերում հեռարձակվող գովազդները հանրությանը ներկայացնում են կեղծ, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն: Բացի դրանից, վարկաբեկվել են մրցակից ընկերությունները՝ օգտագործելով այնպիսի արտահայտություններ եւ առավելապես գերադրական աստիճաններ, որոնց գործածությունն արգելվում է օրենքով: Այդպիսի ընկերություններն են «Բի Էյչ Էս» (BHS) հագուստի խանութ-սրահը, «Լոպտիկը», «Հիքսոս» ընկերությունը՝ Riso Scotti ապրանքանիշով:

«Բի Էյչ Էս» խանութ-սրահի գովազդում նշվում է, որ իրենք հանդիսանում են «տարվա լավագույն միջազգային խանութը», «Լոպտիկի» գովազդում, որ «ակնոցների հարուստ տեսականի աշխարհահռչակ բրենդերից, որոնցից այլ սրահում դժվար թե գտնեք...», Riso Scotti-ի գովազդում՝ «բրնձի իտալական որակը հաստատված է լավագույն շեֆ-խոհարարների կողմից...»: Նման բովանդակություններով գովազդերը ուղղակիորեն հակասում են օրենքին, քանի որ գովազդում թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալները սպառողին հնարավորություն չեն տալիս ամբողջական պատկերացում կազմելու գովազդվող ապրանքի վերաբերյալ, կամ գերադրական աստիճանների անհարկի օգտագործումը համարվում է հասարակության մոլորեցում: Ուստի, հանձնաժողովի որոշմամբ, ընկերությունները պարտավորվեցին դադարեցնել գովազդերի հեռարձակումը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ի «Ջան-ջան» ծառայությունը՝ ավելի գրավիչ պայմաններով

Այժմ, ակտիվացնելով «Ջան-ջան» ծառայությունը, ՎիվաՍել-ՄՏՍ-ի «Բարբառ» սակագնային պլանի բաժանորդները կարող են նաեւ վայելել անսահմանափակ ինտերնետի հնարավորությունները:

«Ջան-ջան» ծառայությունը հասանելի է երկու տարբերակով: I տարբերակն ակտիվացնելով՝ շաբաթական 700 դրամի դիմաց բաժանորդը ստանում է անսահմանափակ ինտերնետ եւ սակագնային պլանի ներսում ՀՀ մարզերից անսահմանափակ թվով զանգեր կատարելու հնարավորություն:

Իսկ II տարբերակով նախկին 700-ի փոխարեն շաբաթական ընդամենը 500 դրամի դիմաց բաժանորդը ստանում է սակագնային պլանի ներսում ՀՀ մարզերից անսահմանափակ թվով զանգեր կատարելու հնարավորություն:

Հիշեցնենք, որ, ինչպես եւ նախկինում, «Ջան-ջան» ծառայությունն ակտիվացրած բաժանորդները շաբաթ եւ կիրակի օրերին Երեւանից նույնպես կարող են կատարել անսահմանափակ թվով զանգեր սակագնային պլանի ներսում, իսկ I տարբերակն ակտիվացրած լինելու դեպքում՝ նաեւ օգտվել ինտերնետից:

ԳՈՒՅԺ

# Ժիրայր Նաիրի



**Բեյրութից՝ ՍԴՀնչակյան կուսակցության Կենտրոնական վարչությունից ստացված հաղորդագրությունը գուժում է մեծավաստակ խմբագիր, ազգային-հասարակական գործիչ, երկար տարիներ Հնչակյան կուսակցության Կենտրոնական վարչության անդամ, 1987-1990 թթ.-ին նույն վարչության ատենապետ Ժիրայր Նաիրիի մահը, որ պատահել է նոյեմբերի 27-ին, սրտի տագնապի հետեւանքով:**

**Ժիրայր Նաիրին շուրջ 50 տարի խմբագրել է Հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան «Արարատ» պաշտոնաթերթը Բեյրութում: Հետագայում ձեռք է բերել Ա. Ծառուկյանի «Նայիրի» շաբաթաթերթի արտոնատիրությունը եւ մինչեւ մահ խմբագրում-հրատարակում էր այն: Նա իր կուսակցության պատվիրակն է եղել տարբեր ֆորումներում, մեծ ծառայություններ է մատուցել Սփյուռք-Հայաստան կապերի սերտացման համար, մանավանդ խորհրդային տարիներին:**

**Հուղարկավորությունը կատարվելու է այսօր, 30 նոյեմբերին, Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարում:**

## Ցավակցություն

Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը բազմավաստակ ազգային-կուսակցական գործիչ, բազմամյա խմբագիր **Ժիրայր Նաիրիի** մահվան կապակցությամբ ցավակցություն է հայտնում ՍԴՀԿ Կենտրոնական վարչությանը, համայն հնչակյաններին, ինչպես նաեւ հանգուցյալի ընտանիքին:

# ՍԴՀԿ հայտարարություն

**Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության Հայաստանի կազմակերպության նորընտիր վարչությունը նոյեմբերի 28-ին գումարեց իր անդրանիկ նիստը՝ այս կերպ փակելով ՍԴՀԿ Հայաստանի կազմակերպության IX համագումարը:**



*ՍԴՀԿ ատենապետ Նարեկ Գալստյան*

**Վարչության նիստում ընտրվեցին հետեւյալ դիվանային բաժանումները: Նարեկ Գալստյան-ատենապետ, Վազգեն Մեսրոպյան-փոխատենապետ, Հարություն Բալաբանյան-ատենադպիր, Գագիկ Մելիքյան- գանձապահ, Դմիտրի Մարտիրոսյան-քաղաքական դիվանի պատասխանատու, Արթուր Բարսեղյան-ներքին դիվանի պատասխանատու, Վարազդատ Եղիազարյան-երիտասարդական դիվանի պատասխանատու, Վոլոդյա Ազատյան-շրջանների հետ տարվող աշխատանքների պատասխանատու, Արսեն Կուպելյան-ընկերային դիվանի պատասխանատու**

**Բացի դիվանային բաժանումներից՝ ՍԴՀԿ Հայաստանի վարչության որոշմամբ Արթուր Ղահրամանյանը նշանակվել է ՍԴՀԿ մամլո դիվանի պատասխանատու, իսկ Մանուկ Ստեփանյանը՝ գաղափարաքարոզչական դիվանի պատասխանատու:**

# «Պայթյունավտանգ, ոչ թե սառեցված»

«Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը պայթյունավտանգ է, ոչ թե սառեցված». այս վերնագիրն է կրում Գերմանահայկական ընկերության «Բեռլինյան դասախոսությունների շարք» հերթական միջոցառումը, որ նախատեսված է անցկացնել դեկտեմբերի 2-ին, ժամը 19.30-ին Բեռլինում՝ Սաքսոնիա-Անհալթի ներկայացուցչությունում: Հրավիրյալ բանախոսը Բեռլինի Ազատ համալսարանի քաղաքագիտության եւ արվեստի պատմության բաժինների շրջանավարտ Ֆրանցիսկա Սմոլնիկն է, որ 2009-ից Բեռլինի «Գիտություն եւ քաղաքականություն» հիմնադրամի Արեւելյան Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով հետազոտական խմբի անդամ է: Ուվե Հալբախի հետ հեղինակել են «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը» գիտահետազոտական աշխատությունը:

Ան. Հ., Գերմանիա

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Վիլնյուսում եւ Վիլնյուսից հետո

Գրեթե 4 տարի Եվրոմիության հետ Ասոցիացման համաձայնագրի բանակցություններից ու սպասումներից, իսկ սեպտեմբերի 3-ին Մոսկվայում Հայաստանի նախագահի՝ Մաքսային միությանն անդամակցելու որոշման մասին հայտարարությունից հետո երեկ Վիլնյուսում Հայաստանն ու Եվրոմիությունը համատեղ հայտարարություն տարածեցին, թե Ասոցիացման եւ Խոր ու համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման համաձայնագրերի բանակցությունները ավարտվել են, բայց ոչինչ չի ստորագրվելու:

Դա, ինչպես ասում են, առանց այդ համատեղ հայտարարության էլ հայտնի ու պարզ էր, միայն թերեւս պաշտոնապես ամրագրվեց, որ անհրաժեշտ է արդիականացնել ԵՄ-Հայաստան եվրոպական հարեւանության քաղաքականության գործողությունների ծրագիրը, որը Ասոցիացման համաձայնագրի ստորագրման դեպքում կդառնար առավել ցածր կարգի փաստաթուղթ, սակայն այս դեպքում ստացվում է, որ հին ձեւով այն գործել չի կարող, իսկ նոր՝ ավելի բարձր մակարդակի համագործակցություն ապահովող փաստաթուղթն էլ չստորագրվեց, մնում է արդիականացնել հինը:

Բացի համատեղ հայտարարությունից՝ տեղի է ունեցել նաեւ նամակների փոխանակում Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ Եվրոպական միության արտաքին քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի միջեւ: Նամակներ, «որոնք նախանշում են ապագային միտված Հայաստանի եւ Եվրոմիության միջեւ համագործակցության օրակարգը»: Սա թերեւս կարելի է ընկալել որպես կողմերից յուրաքանչյուրի մոտեցման շարադրում՝ առանձին-առանձին:

Այսինքն՝ Հայաստանի հետ հարաբերությունների առումով դեռ մի որոշ ժամանակ դադարի վիճակ կլինի, որի ընթացքում կողմերը կփորձեն հասկանալ, թե որտեղ, ինչ ուղղությամբ ու ինչ ծավալնելով է հնարավոր շարունակել համագործակցությունը, որը Հայաստանի հետ այսուհետեւ չի լինելու «միասին, միասնաբար» մոտեցմամբ, ինչը դիրքորոշում է Վիլնյուսում Վրաստանի ու Մոլդովայի հետ Ասոցիացման համաձայնագրերի նախաստորագրմամբ: Վրաստանը պատրաստվում է փաստաթղթերը ստորագրել արդեն 2014-ի սեպտեմբերին, Մոլդովան մինչ այդ թերեւս որոշի Ռումինիայի հետ միավորվելու հարցի ապագան:


EU / PHOTOLURE

Ուկրաինայի պարագան մնաց եվրոպացիների հույսերով ու ուկրաինացիների բողոքի ակցիաներով այն դեպքում, երբ ուկրաինական իշխանությունները թեեւ չեն խոսում Մաքսային միությանն անդամակցության հեռանկարի մասին, սակայն համամիտ լինելու ոչ մի դրսեւորում չեն անում՝ կապված հաջորդ տարի Ասոցիացման համաձայնագիրը ստորագրելու առնչությամբ եվրոպական լավատեսության հետ:

Ադրբեջանի հետ ստորագրվեց վիզաների դյուրացման համաձայնագիրը, Բելառուսի պարագայում էլ ոչինչ ոչ ակնկալվում էր, ոչ էլ ստացվեց:

Փաստացի ստորագրում-նախաստորագրումներն այսքանով ավարտվեցին, սակայն առավել հստակորեն հետագայի ծրագրերի առնչությամբ քննարկումներ կամ տեղեկություններ կլինեն ոչ շուտ, քան հունվար ամսից հետո, երբ կողմերը, մասնավորապես, Հայաստանի եւ Եվրոմիության պարագայում, կհստակեցնեն իրավիճակն ու հնարավոր համագործակցային ոլորտները:

Այս ամենը Վիլնյուսում էր, իսկ Վիլնյուսից հետո՝ դեռ կտեսնենք:

Վ. Պ.



# Երկկողմ հանդիպումներ Ֆրանսիայի նախագահի, Իսպանիայի վարչապետի, ԵՄ եվրոպական տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովի նախագահի հետ

Աշխատանքային այցով Լիտվայի Հանրապետությունում գտնվող նախագահ Սերժ Սարգսյանը երեկ Վիլնյուսում երկկողմ ձեւաչափով մի շարք հանդիպումներ է ունեցել: Հայաստանի նախագահը հանդիպել է Արեւելյան գործընկերության պետությունների ղեկավարների երրորդ գագաթաժողովին մասնակցելու նպատակով Վիլնյուս այցելած Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի հետ:

Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ զրուցակիցները գոհունակությամբ են խոսել հայ-ֆրանսիական քաղաքական բարձր մակարդակի երկխոսության մասին, ընդգծելով, որ բարեկամ երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացմանն զգալիորեն նպաստում են հաճախակի փոխայցելությունները, փոխշահավետ տարբեր ոլորտներում համագործակցությունը, ինչպես նաեւ փոխգործակցությունը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության շրջանակներում եւ միջազգային հարթակներում:

Հայաստանի եւ Ֆրանսիայի նախագահները համակարծիք են եղել, որ այդուհանդերձ, երկկողմ առեւտրատնտեսական համագործակցության ընդլայնման ու ապրանքաշրջանառության ծավալների մեծացման զգալի ներուժ գոյություն ունի, որի ուղղությամբ անհրաժեշտ է երկուստեք նպատակաուղղված աշխատանք իրականացնել: Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ Հայաստան-ԵՄ համագործակցությանը, մտքեր փոխանակել տարածաշրջանային խնդիրների շուրջը:

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ հանդիպում է ունեցել նաեւ Իսպանիայի Թագավորության վարչապետ Մարիանո Ռախոյի հետ:

Սերժ Սարգսյանը եւ Մարիանո Ռախոյը քննարկել են հայ-իսպանական հարաբերությունների օրակարգին եւ երկկողմ համագործակցության զարգացման հնարավոր ուղղություններին վերաբերող հարցեր: Հանրապետության նախագահը նշել է, որ Հայաստանը մեծապես կարեւորում է Իսպանիայի հետ քաղաքական երկխոսության զարգացումն ու փոխգործակցության ամրապնդումը առեւտրատնտեսական եւ մի շարք այլ ոլորտներում:

Եվս մեկ հանդիպում տեղի է ունեցել ԵՄ եվրոպական տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովի նախագահ Անրի Մալոսի հետ:

Անրի Մալոսը ցանկություն է հայտնել սերտացնելու իր գլխավորած հանձնաժողովի հարաբերություններն ու համագործակցությունը Հայաստանի հետ: Հանրապետության նախագահը Հայաստանի կողմից պատրաստակամություն է հայտնել ակտիվացնելու փոխգործակցությունը ԵՄ եվրոպական տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովի հետ՝ ակտիվորեն ներգրավվելով հանձնաժողովի կողմից իրականացվող ծրագրերում:

Վ. Պ.

# Համաձայնություն եվրոպական մոդելով առաջ շարժվելու

*1-ին էջից*

Հենվելով ընդհանուր արժեքների վրա՝ «երկու կողմերը հանձնառու են զարգացնել համագործակցությունը՝ ուղղված ժողովրդավարական հաստատությունների եւ դատական համակարգի շարունակական բարելավմանը, մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության խթանմանը, արդյունավետ կառավարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, քաղաքացիական հասարակության ամրապնդմանը, առեւտրի ու ներդրումների ընդլայնման համար միջավայրի հետագա կատարելագործմանը, շարժունակության գործընկերության շարունակական իրականացմանը եւ ոլորտային համագործակցության ընդլայնմանը»:

Եվրոպական միությունը եւ Հայաստանը, ըստ համատեղ հայտարարության, շեշտում են իրենց ընդհանուր ձգտումը համագործակցության գործող շրջանակի հիման վրա երկկողմ հարաբերությունների հիմքին անդրադառնալու կարեւորությունը: «Կողմերը համաձայն են, որ անհրաժեշտ է արդիականացնել ԵՄ-Հայաստան Եվրոպական հարեւանության քաղաքականության գործողությունների ծրագիրը»:

## Եվրոպական մոդելով առաջ շարժվելը Հայաստանի համար անշրջելի՞

Հայաստանի նախագահը վիլնյուսյան իր ելույթում նշել է, թե Հայաստանը վճռական է շարունակելու Հայաստան-ԵՄ հարաբերությունների առանցքը կազմող խորքային եւ լայնածավալ ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, ազատ տնտեսական մրցակցության ապահովմանը, կառավարության գործունեության թափանցիկության բարձրացմանը, դատական համակարգի անկախության ապահովմանը, խոսքի ազատության երաշխավորմանը, քաղաքացիական հասարակության ամրապնդմանը:

«Եվրոպական մոդելով Հայաստանի պետականության կառուցումն ու ամրապնդումը մեր գիտակցված ընտրությունն է եղել, եւ այդ գործընթացն այլեւս անշրջելի է», ասել է Սերժ Սարգսյանը:

Մաքսային միությանն անդամակցելու որոշում կայացրած Հայաստանի նախագահը, հիմա էլ Վիլնյուսում, հայտարարել է, թե Արեւելյան գործընկերության ծրագրի հնգամյա պատմությունը վկայում է այս ձեւաչափի «անհրաժեշտության եւ կենսունակության մասին»: Ըստ այդմ, Արեւելյան գործընկերությունը հնարավորություն է «եվրոպական ընդհանուր արժեքների հիման վրա որակապես նոր, առավել սերտ ու ընդլայնված հարաբերություններ կառուցելու համար, այդպիսի հարաբերությունների ձեւավորումը Հայաստանի ու հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային եւ պատմաքաղաքական ժառանգության կանչն է, մեր հասարակության՝ գիտակցված պահանջարկը»:

Արեւելյան գործընկերությունը, նախագահի ելույթի համաձայն (նաեւ փաստացի իրականում-Վ.Պ.), հնարավորություն տվեց նոր թափ հաղորդելու ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության սկզբունքների հիման վրա Հայաստանի ու հասարակության արդիականացմանն ուղղված ջանքերին: «Որպես չափելի արդյունք կնշեմ ընդամենը վերջին մեկուկես տարվա ընթացքում Հայաստանում տեղի ունեցած երեք խոշոր ընտրական գործընթացները, որոնք նոր նշաձող սահմանեցին այս ոլորտում՝ էապես ամրապնդելով Հայաստանի ընտրական համակարգը»:

Սերժ Սարգսյանը հայտարարել է, թե Հայաստանի համար գլխավոր նպատակն է Եվրոպական միության հետ ձեւավորել այնպիսի գործուն կառուցակարգեր, որոնք մի կողմից արտացոլում են սոցիալ-քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների խորքային բնույթը, մյուս կողմից համատեղելի են համագործակցության այլ ձեւաչափերի հետ: Արեւելյան գործընկերությունը պետք է բնական կամուրջ դառնա՝ տարածելով տնտեսական ինտեգրումը Ատլանտյանից մինչեւ Խաղաղ օվկիանոս:

«Այս իմաստով մենք հանձնառու ենք հետեւողական ջանքեր գործադրելու առավել ընդգրկուն, բաժանարար գծերից զերծ Եվրոպա կառուցելու ուղղությամբ», Վիլնյուսում՝ գագաթաժողովի փակ դռների հետեւում հայտարարել է Սերժ Սարգսյանը: Սրա հիմքով էլ, ըստ նախագահի, Հայաստանն առաջնորդվում է իր արտաքին հարաբերություններում եւ հարեւանների հետ խնդիրները փորձում է կարգավորել հենց այդ սկզբունքով՝ փորձելով Եվրոպայում հաջողված հաշտեցման փորձը տեղայնացնել նաեւ մեր տարածաշրջանում:

Ի մասնավորի, Սարգսյանի մասնցմամբ, եվրոպական արժեքների հետեւողական որդեգրումը կարող է օգնել Թուրքիային սեփական անցյալի հետ հաշտվելու հարցում: «Այսօր հազարավոր թուրքեր դատապարտում են Հայոց ցեղասպանությունը եւ կանգնում մեր կողքին՝ հարգելու Ցեղասպանության զոհերի հիշատակը... Եվրոպական միության անդամ-պետություններից, որպես մեր գործընկերներից, մենք ակնկալում ենք Թուրքիայի կողմից Հայաստանի ապօրինի շրջափակման վերացման հարցում լիարժեք ներգրավում եւ հետեւողականություն»:

Սերժ Սարգսյանն անդրադարձել է նաեւ վերջերս Վիեննայում տեղի ունեցած Հայաստան-Ադրբեջան բանակցությունների շրջանակներում կազմակերպված հանդիպմանը: «Թեեւ արդյունքների մասին դեռ շատ վաղ է խոսել, այդուհանդերձ հանդիպման փաստն ինքնին դրական երեւույթ է», շեշտել է Սարգսյանը:

Նրա մոտեցմամբ՝ «Բանակցությունների հաջող ելքն իրականում կախված է այն բանից, թե որքանով մենք մեր ժողովուրդներին կպատրաստենք խաղաղության, թե որքանով կկարողանանք հրաժարվել բացասական հռետորաբանությունից եւ թուլացնել լարվածությունը շփման գծում: Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը ձեռնպահ են եղել իրավիճակն ապակայունացնող հայտարարություններից ու քայլերից եւ որդեգրել են ժողովրդավարության, մարդու իրավունքների, ազատ տնտեսական մրցակցության, ազատ խոսքի հիման վրա պետություն կառուցելու ճանապարհը՝ հաստատակամ քայլերով առաջ ընթանալով այդ ուղիով»:

ԱԶԳ

## Պատասխանի իրավունքով

# Ձոն այլախոհ Ավետիքին

XX դարի վերջին երեք տասնամյակներում Մոսկվայի եւ Լենինգրադի գրական շրջաններում հայտնի գրականագետ, ակադեմիկոս Լեւոն Մկրտչյանին անվանում էին Հայաստանի Վոլտեր: Այդ բարձր գնահատականին նա արժանացել էր իր լուսավորչական գործունեության, միլիոնավոր ռուս ընթերցողներին հայ միջնադարյան եւ ժամանակակից գրականության գործերին ծանոթացնելու համար: Նա հայտնի էր նաեւ նրանով, որ, լինելով Երեւանի պետական համալսարանի պրոֆեսոր, դաստիարակել էր հայ գրականագետների մի ամբողջ խումբ: Նրա ամենահայտնի սաներից մեկը ՀԳԱ գրականության ինստիտուտի այսօրվա տնօրեն Ավիկ Իսահակյանն է (Լեւոն Մկրտչյանն է ղեկավարել նրա թեկնածուական ատենախոսությունը): Ինչպես կարգն է, Իսահակյանը իր ղեկավարին միշտ վերաբերվում էր մեծ հարգանքով: Սակայն պատահեց այնպես, որ 12 տարի առաջ կյանքից հեռացած իր գիտական ղեկավարի նկատմամբ դիսերտանտի վերաբերմունքի մեջ մետամորֆոզներ տեղի ունեցան: Եվ դրանք առաջացան այն բանից հետո, երբ ակադեմիական ինստիտուտի տնօրենն իր սեփական կենսագրության մեջ հանկարծ հայտնաբերեց այլախոհությանը առնչակից լինելու հանգամանքներ: Եվ մեծն այլախոհը, իր հակախորհրդային ապստամբ ոգին նկարագրելու նպատակով ընտրելով նույնպիսի ապստամբ ոգու տեր Հովհաննես Շիրազին, որոշեց անկեղծանալ ու մարդկությանը տեղեկացնել իր հուշերի մասին: Ինչպես վայել է իսկական հուշագրին, լճացման դարաշրջանի «օբյեկտիվ» ու «անշահախնդիր» պատմագիրը՝ բ.գ.դ. Ավիկը, «**Ազգ**» օրաթերթի համարներում սկսում է տպագրել իր հուշերը: Հուշերից պարզ է դառնում, որ ատելով համակարգը՝ իսկական մտավորականները, որոնցից էր նաեւ Շիրազը, օրեր էին մթնեցնում «այլախոհության կղզյակ» հանդիսացող «Արմենիա» ռեստորանում, բայց ոչ միայն ուտել-խմելու, այլեւ հայրենիքի ճակատագրի համար տխրելու ու բարձրաձայնելու նպատակով՝ չերկնչելով խոսելուց խորհրդային ստրկատիրական համակարգի մասին:

Բայց մեկ-մեկ պատահում էր, որ «ազատամտության կղզյակները» (երկրորդ «կղզյակը», ինչպես հիշում է մեծն թոռը, «Ինտուրիստ» հյուրանոցի ամառային սրճարանն էր) այցելում էին նաեւ ապաշնորհ, ծախու հոգիները՝ ռեժիմի կողմից բուծված նոմենկլատուրային մտավորականները: «Հետո՞ ինչ, որ հոգիդ վաճառել ես սատանային,- պաթետիկ կոչով մերկացնում է դրանց դասականի թոռը, ապա շարունակում,- արդեն 1917 թվից չկար ո՛չ հավատ, ո՛չ կրոն եւ ո՛չ էլ խղճի զգացողություն: Ու մտածում էին մեր «նոմենկլատուրային մտավորականները». «Աստված էլ երբեք չի գա, նա այս երկրի համար արդեն եկել էր սկզբում Լենինի, իսկ հետո՝ Ստալինի կերպարանքով»:

Ինչպես պատմում է ականավոր թոռը, նոմենկլատուրային մտավորականները զուրկ լինելով որեւէ գրողական, պոետական ձիրքից, դառնում էին ստեղծագործական միությունների ղեկավարներ: Տաղանդի փոխարեն սրանք օժտված էին ու ճարպկորեն օգտվում էին իրենց ընձեռված այլ հատկանիշներից՝ ստորաքարշությունից եւ պնակալեզությունից: Եվ կերակրատաշտից օգտվելու համար պատրաստ էին ամեն ինչի: Անվանապես նշելով նրանցից շատերին, ովքեր 50-ից 80-ական թթ. ղեկավարել են Հայաստանի գրողների միությունը՝ հուշագիր Ավիկը բողոքում է, թե նրանց հիշելիս «գյումրեցու ասած՝ լացս կուգա»: Զսպելով հեծկլտոցը՝ նա շարունակում է իր աղեխարշ պատումը «ազատության կղզյակների» խստադեմ, մռայլ այցելուների մասին (ժպտալ, առավել եւս ծիծաղել եւ, Աստվա՜ծ մի արասցե, անեկդոտ պատմել նրանց արգելում էին կուսակցական ամենակարող տերերը):

Իսկ նրանք բացառապես գալիս էին այդտեղ, որպեսզի մեծամտորեն ճեմելով եւ անցնելով այն սեղանիկների կողքով, որտեղ նստած էին հայրենիքի ճակատագրի մասին խորհող իրական մտավորականները, Երեւան այցելած հյուրերին ուղեկցեն դեպի ճաշարան («գրողական ինտերնացիոնալը»): Այստեղ ես կանգնեմ մեջբերման. «Չնայած գրողներն ունեին նաեւ իրենց նոմենկլատուրային կատակ կամ սրամտություն անող քարտուղար-պրոֆեսորը, սակայն նա ասպարեզ եկավ ավելի ուշ, արդեն բրեժնեւյան ճգնաժամի շրջանում, եւ հարկ է ասել, որ սկսեց գործել շատ ակտիվ եւ իրեն բնորոշ բացառիկ զոռբայությամբ (ինչ անուն տաս, օրինակ, նրա կողմից Շիրազին ծեծելու փաստին «Հրազդան» հյուրանոցի սրահում՝ արտասահմանյան գրողների ներկայությամբ): Ահա նրան կտեսնեիր Վիլյամ Սարոյանի, Ռասուլ Համզատովի, Կայսին Կուլիեւի, Չինգիզ Այթմատովի, Միխայիլ Դուդինի կողքին ...»:

Եթե ինչ-որ մեկի մեջ կասկած կարող է առաջանալ, որ խոսքն այստեղ Լեւոն Մկրտչյանի մասին է, ապա պատմության շարունակությունը եւ մեկ այլ նոմենկլատուրային մտավորականի մասին հիշատակությունն անմիջապես կցրի բոլոր կասկածները: «Քարտուղար-պրոֆեսորի» անմիջական «շեֆը», - ինչպես հաղորդում է պատմիչը,- Վարդգես Պետրոսյանն էր, որն, «ի դեպ, արդեն առանձին խոսակցության թեմա է, թե ինչպես 15 տարի հայ մտավորականության բախտը տնօրինեց Կարեն Դեմիրճյանի դպրոցական «վինետկային» մաս կազմած այս ընկերը ...»:

Եվ քանի որ Վարդգես Պետրոսյանն այլ, հատուկ խոսակցության է արժանի, ապա դասական գրողի թոռանը պետք էր այս պերսոնաժը ներմուծել այն բանի համար, որ ընթերցողին առավելագույնս հնարավորություն տրվի Լեւոն Մկրտչյանին ու «քարտուղար-պրոֆեսորին» նույնականացնելու: Հո չէ՞ր կարող իսկական տղամարդը իր գիտական ղեկավարին մատնանշել: Դե ահա նա էլ, ելնելով բարոյականության մասին ի՛ր պատկերացումներից, գտավ միջոցը, եւ ինչպես իրեն էր թվում, ոչ ոք իրեն չէր կարողանա մեղադրել վախկոտության եւ անբարո գործելակերպի մեջ: Ես չգիտեմ, թե ի՞նչ նպատակներ էր հետապնդում հուշագիրը, երբ բերում էր այն գրողների ցուցակը, որոնց ուղեկցել է Լեւոն Մկրտչյանը: Եթե ա՛յն բանի համար, որ ցուցադրի, թե նոմենկլատուրային հյուրերին պետք է ուղեկցեր նոմենկլատուրային ղեկավարը, ապա այդ դեպքում ինչպե՞ս հայտնվեց ցուցակում Սարոյանը (բոլոր նրանք, ում նա նշում է, Սարոյանից բացի, առավել նոմենկլատուրային մտավորականներ էին, քան ինքը՝ Լեւոն Մկրտչյանը.... Նրանք ոչ միայն հանրապետական գրողների միությունների քարտուղարներն էին, այլեւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորներ, իսկ Դուդինը նույնիսկ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում ուներ): Իսկ եթե այդ անունները վկայում են քարտուղար-պրոֆեսորի «անսկզբունքայնության» մասին, որի համար միեւնույն էր՝ ո՛ւմ ուղեկցել, ո՛ւմ ժպտալ, ո՛ւմ զվարճացնել, ապա այդ դեպքում ինչո՞ւ կրտսեր Իսահակյանը հաշվի չի առել, որ իր նշած գրողները, պոետները, ինչպես ասում են, առաջին կարգի ստեղծագործողներ էին: Եթե ես այստեղ սկսեմ խոսել ու թվարկել նրանցից ամեն մեկի արժանիքները ու տաղանդը, խոսեմ Լեւոն Մկրտչյանի հանդեպ նրանց վերաբերմունքից, ապա իմ «Խոսքը....» կվերածվի տրակտատի: Այդ իսկ պատճառով կանգ կառնեմ միայն Մ. Դուդինի անվան վրա եւ կանդրադառնամ Ավիկ Իսահակյանի «Аветик Исаакян и Россия» (Մոսկվա, 1988) գրքին: Դասական գրողի թոռը գրում է. «Ավ. Իսահակյանի պոեզիայի խորապես ստեղծագործական ընթերցումներից են Մ. Դուդինի թարգմանությունները: Հայ գրականության հմուտ եւ քաջ գիտակ, հրաշալի բանաստեղծ ու թարգմանիչ Դուդինը, Ավ. Իսահակյանի ստեղծագործությունները խորապես ուսումնասիրելով, հանձն առավ իր ընտրությամբ՝ իր հոգում տեղ գտած, իր համար առանձնապես թանկ, տարբեր տարիներին գրված բանաստեղծությունների թարգմանությունը՝ այդպիսով ստեղծելով ամբողջական բանաստեղծական շարք, որը վերնագրեց «Земля обетованная»....: Դուդինի այս թարգմանություններն աչքի են ընկնում շեշտված քնարականությամբ, համարձակ գեղարվեստական պատկերներով, երբեմն՝ անսպասելի հնչերանգով, ինչը հատուկ է հենց իրեն՝ թարգմանչին»:

Թվում է՝ Իսահակյանի պոեզիայի թարգմանության նմա՛ն գնահատականը հենց թելադրում է, որ «հրաշալի պոետին ու թարգմանչին» ճաշարան ուղեկցեր ոչ թե քարտուղար-պրոֆեսորը, այլ այս բառերի հեղինակը՝ երախտագետ թոռը: Բայց թոռն այդ ժամանակ, ամենայն հավանականությամբ, զբաղված էր «Արմենիայի» մեկ այլ դահլիճում, որտեղ ուրիշ մտավորականների հետ, մեկ բաժակ սուրճի շուրջը, հայրենիքը կոմունիստական վարակից ազատագրելու ծրագրեր էր մշակում: Ու մնում է եզրակացնել, որ իր բանաստեղծությունները Դուդինը (երիցս) նվիրել է ոչ թե նրան՝ Ավիկին, այլ Լեւոն Մկրտչյանին, միայն ինչպես նոմենկլատուրային մտավորականը նոմենկլատուրային մտավորականին: Հենց նույն պատճառով էլ նա անսաց Լեւոն Մկրտչյանի հորդորին եւ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի ռուսերեն թարգմանության առաջաբա՛նը գրեց ու սկսեց թարգմանել նաեւ Համո Սահյանի բանաստեղծությունները, երբ բանաստեղծը դեռ ողջ էր: Եվ «С жаворонком на плече» շարքի նմանությամբ Լենինգրադում հրատարակեց Համո Սահյանի բանաստեղծությունների իր թարգմանությունները՝ «Поздние ягоды» (նշեմ, որ նոմենկլատուրային պրոֆեսորի պատվերով, դեռեւս իր քարտուղարության տարիներին՝ 1976թ., այդ ժողովածուի տողացի ռուսերեն թարգմանությունները կատարվել էին իմ կողմից): Դժվար թե Լ. Մկրտչյանի դիսերտանտը տեղյակ չէր, որ Հայաստանին ու հայ գրականությանը Դուդինին մերձեցրեց «բացառիկ զոռբայությամբ գործող» պրոֆեսոր-քարտուղարը: Եվ հայ գրականության մեծ գիտակ նա դարձավ հենց ա՛յդ անձնավորության շնորհիվ, որին Միխայիլ Ալեքսանդրովիչը անվանեց Հայաստանի համար բարեկամներ ստեղծելու գործում դասական վարպետ: Եվ Ղարաբաղի խնդրի վրա էլ Դուդինի ուշադրությունը հրավիրեց նո՛յն Լեւոն Մկրտչյանը, այն էլ այնպես, որ իրադարձությունների ամենաթեժ ժամանակահատվածում նրա հետ մեկնեց Ղարաբաղ: Այդ այցելությունից հետո Դուդինը գրեց. «Թանկագի՛ն Լեւոն, Հայաստանն ու Ղարաբաղը ես երբեք չեմ մոռանա»: Ղարաբաղում էլ Դուդինի՛ն չմոռացան, բանաստեղծի մահից հետո Ստեփանակերտում նրա անունով փողոց անվանակոչեցին: Կասկած չունեմ, որ եթե գրականության ինստիտուտի այսօրվա տնօրենի փոխարեն Լեւոն Մկրտչյանը լիներ, Դուդինի անունով վաղուց անվանակոչված կլիներ նաեւ Երեւանի որեւէ փողոց եւ ո՛չ միայն հայ պոետների գործերը թարգմանելու, Վերֆելի վեպի առաջաբանի պատճառով, այլեւ այն պատճառով, որ Երեւանում «Земля обетованная» գիրքը հրատարակելով՝ Դուդինը ողջ հոնորարը փոխանցեց երկրաշարժից տուժածների ֆոնդին:

Կասկածում եմ, թե Իսահակյանը չգիտեր, որ Դուդինը միակը չէր, ով Լեւոն Մկրտչյանի թեթեւ ձեռքով «հիվանդացավ» Հայաստանով, ով նոմենկլատուրային մտավորականի միջնորդությամբ դարձավ հայ պոետների թարգմանիչ... Առնվազն տարօրինակ է, որ Հովհաննես Շիրազի նկատմամբ տածած անսահման սերն ու կարեկցանքի դեպքում անգամ, Ավետիք II-ը չի հիշում, որ նրա բանաստեղծությունների թարգմանությունը լենինգրադցի բանաստեղծ Ալեքսանդր Գիտովիչի միջոցով կազմակերպեց նույն Լեւոն Մկրտչյանը: Եվ Գիտովիչը ոչ միայն թարգմանեց Շիրազին, այլեւ նվիրեց նրան իր բանաստեղծությունը: Դա տեղի է ունեցել նախքան այն բանը, ինչպես հուշագիրն է հիշում, երբ պրոֆեսոր-քարտուղարը օտար հյուրերի ներկայությամբ ծեծեց մեծ պոետին:

Կարդում ես գիտնական-գրականագետի այս բարբաջանքը, եւ անմիջապես աչքիդ առաջ հառնում է մի սարսափելի պատկեր՝ նոմենկլատուրային անտաղանդ, կոշտուկոպիտ եւ կռվազան Մկրտչյանը ծեծում է անպաշտպան, զգայուն ու քնքուշ քնարերգուին: Այո, Լեւոն Մկրտչյանի կենսագրությունում նման փաստ առկա էր, եւ նա երբեւէ դա չի թաքցրել (ճիշտը որ խոսենք, նա ոչ թե ծեծել է, այլ, իր խոսքերով, «հասցրել է մռութին»): Ավելին, նա երբեւիցե ո՛չ թաքցրել է, ո՛չ էլ զղջացել իր արարքի համար: Նույնիսկ այն ժամանակ, երբ Ավիկ Իսահակյանից էլ առաջ այդ մասին որոշեց հիշել ու Լ. Մկրտչյանին պատասխանատվության կանչել հայ մեկ ուրիշ դասական՝ Սերո Խանզադյանը (այս մասին մանրամասն կարելի է կարդալ Սերո Խանզադյանին ուղղված նրա բաց նամակում՝ «Քննարկել Լեւոն Մկրտչյանի հարցը», որը հրապարակվել է 1992թ. փետրվարի 14-ի «Գրական թերթում»):

Դատելով այն հանգամանքից, որ սրտացավ գիտնականի աչքերը արցունքով են պատվում ամեն անգամ, երբ նա մտաբերում է զարգացած սոցիալիզմի դարաշրջանի Հայաստանի գրողների միության ղեկավարներին, ստացվում է, որ 80-ականներին հաջորդած տարիներին ղեկի մոտ բացառապես հանճարներ են եղել: Թեեւ, հնարավոր է, որ այսպիսի հստակ ժամանակագրական սահմանները նշված են նրա համար, որ նախկին քարտուղարներից ոմանք դեռ ողջ են: Իսկ անպատիժ կերպով կեղտ շպրտել հնարավոր է միայն հանգուցյալների՛ վրա:

Կարծում եմ, որ եթե ակադեմիական ինստիտուտի տնօրենը երկարակյաց գտնվի ու ավելի երկար ապրի նրանցից, ովքեր վերջին տարիներին գլխավորել են Գրողների միությունը, ապա իր հուշերը կլրացնի նաեւ նրա՛նց անուններով:

**ԿԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆՑ**
**Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի**
**Լեւոն Մկրտչյանի հուշասենյակի վարիչ**

# Միջազգային

## Վիլնյուսից՝ Բաքու

Եվրոմիության արեւելյան գործընկերության Վիլնյուսի գագաթաժողովին մասնակցել է նաեւ Իլհամ Ալիեւը: Պաշտոնական Բաքուն հայտարարել է, որ մտադիր չէ քննարկել ԵՄ-ի հետ ասոցիացիայի հարցը, քանի որ «Ադրբեջանի հարաբերությունները Եվրոմիության հետ բացառիկ են»: Այստեղ, իհարկե, առաջին հերթին նկատի է առնված ԵՄ-Ադրբեջան համագործակցությունն էներգետիկ ծրագրերում:

Ըստ կանխատեսումների, եթե ամեն ինչ բարեհաջող ընթացք ունենա, արդեն 2019թ. Ադրբեջանը «կապահովի ԵՄ-ի գազի սպառման ծավալների 10 տոկոսը»:

Ամեն ինչ, սակայն, կախված է «Շահդենիզ-2» հանքավայրում 25 մլրդ դոլար ներդրումներից: Ադրբեջանի կառավարությունը չունի այդ հնարավորությունը, BP-ն համաձայն է ներդրումներ անել, սակայն պայմանով, որ մինչեւ այդ գումարների ծախսածածկումն Ադրբեջանը գազի արտահանումից իր մասնաբաժինը չստանա: Իսկ դա նշանակում է ի դերեւ անել Իլհամ Ալիեւի հույսերը:

Վիլնյուսի գագաթաժողովում ուշագրավ տեսակետ է հայտնել Լեհաստանի արտգործնախարար Սիկորսկին: Ճիշտ է, լեհ դիվանագետի թիրախը Ռուսաստանն է, բայց չէ՞ որ Ադրբեջանի եւ տնտեսությունը, եւ քաղաքական համակարգի հարաբերական կայունությունը նույնպես խարսխված են նավթի արտահանումից ստացվող եկամուտների վրա: Սիկորսկին ասել է, որ Ռուսաստանում իրավիճակ կփոխվի, եթե նավթի գներն իջնեն մեկ բարելի դիմաց 100 դոլարից:

Ճիշտ այդ գինն է դրված Ադրբեջանի 2014թ. պետական բյուջեի եկամուտների կանխատեսման հիմքում: Եվ եթե լեհ պաշտոնյայի խոսքը միայն ցանկություն չէ, այլ՝ եվրոպական հնարավոր քաղաքականության անուղղակի անոնսավորում, ապա հնարավոր է, որ Ադրբեջանին լավ ժամանակներ չեն սպասում: Մանավանդ որ հարեւան երկրում արդեն իսկ խիստ անհանգստացած են, որ Իրանի դեմ տնտեսական պատժամիջոցների մեղմումը նույնպես հանգեցնելու է համաշխարհային շուկայում էներգակիրների գների անկման:

Այս իրավիճակի նկատառմամբ Վիլնյուսում Ադրբեջանի եւ Եվրոմիության միջեւ մուտքի արտոնագրի ռեժիմի դյուրացման մասին ստորագրված համաձայնագիրը կարելի է համարել Իլհամ Ալիեւին տրված «սփոփիչ մրցանակ», մանավանդ որ Արեւելյան գործընկերության անդամ այլ երկրների հետ նման փաստաթուղթ ԵՄ-ն ստորագրել է ավելի վաղ:

Միաժամանակ, նշված համաձայնությունը կարող է գլխացավանք դառնալ Եվրոմիության համար: Բանն այն է, որ Ադրբեջանում իշխող վարչախմբի քաղաքական շատ հակառակորդներ տարիներ ի վեր վտարանդիության մեջ են ԵՄ անդամ տարբեր երկրներում: Առավել հայտնի դեմքերի դեմ Ադրբեջանում հարուցված են քրեական գործեր, եւ պաշտոնական Բաքուն վաղուց ձգտում է նրանց արտահանձնմանը: Եթե ԵՄ-ն Ադրբեջանի հետ ստորագրի նաեւ ռեադմիսիայի համաձայնագիր, ապա չի բացառված, որ Իլհամ Ալիեւը փորձի այն օգտագործել զուտ քաղաքական նպատակներով: Այն է՝ հասնել եվրոպական երկրներից քաղաքական հակառակորդների «հայրենադարձությանը», որպեսզի Ադրբեջանում նրանք ենթարկվեն քրեական պատասխանատվության:

Այլ բան Բաքվում իշխող վարչախմբից սպասելի չէ: Նույն օրը, երբ Իլհամ Ալիեւը Վիլնյուսում էր, Բաքվում իշխող վարչախմբի էությունը լիովին բնորոշող երեւույթ է արձանագրվել: Բաքվի թիվ 7 մանկական պոլիկլինիկայի 280 աշխատողներ դիմում-բողոք են հղել Ադրբեջանի նախագահին, որ իրենց մոտ գլխավոր բժիշկ է նշանակվել Լոլիտա Զուարլինսկայան, որը «ազգությամբ հայ է»: Vesti.az-ն այդ առթիվ սեփական հետաքննությունն է անցկացրել: Լրագրողը կապվել է Զուարլինսկայայի հետ: Վերջինս «մաքուր ադրբեջաներենով» տեղեկացրել է, որ ինքը «Լոլիտա Աբյուլ կըզի Ալիեւան է, ծնվել է ադրբեջանցի հորից եւ մորից, ամուսնացած է ադրբեջանցու հետ, որը ծագումով Ֆիզուլիի շրջանից է, կրում է ամուսնու ազգանունը, ավելացնելու ոչինչ չունի, այդ թեմայով խոսակցությունն իսկ տհաճ է»:

Հետաքրքրական է, ի՞նչ էր սպասում Լոլիտա Զուարլինսկայային, եթե նա իրականում ծպտված հայուհի լիներ, ի՞նչ էր պատասխանելու Իլհամ Ալիեւը Բաքվի թիվ 7 մանկական պոլիկլինիկայի 280 աշխատողներին, որոնց մեջ «կան փախստականներ եւ հարկադրաբար տեղահանվածներ, շեհիդների հարազատներ», ինչպես իրենց ցասումն էլ ավելի «հիմնավորելու» նկատառումով ընդգծել են դիմում-բողոքի հեղինակները:

Ըստ երեւույթին, Իլհամ Ալիեւի հետ հարաբերություններում Եվրոմիությունը պետք է հաշվի առնի ոչ միայն սեփական «էներգետիկ», այլեւ Ադրբեջանի քաղաքացիների պարզ-մարդկային անվտանգության ապահովման կարեւորությունը: Այլապես երաշխիք չկա, որ «շեհիդ»-ի հարազատ մեկը կարող է կացնահարել Լոլիտա Զուարլինսկայային միայն նրա համար, որ ոչ ադրբեջանական անուն-ազգանուն ունի եւ կասկածվում է «ծպտված հայուհի» լինելու «ծանրագույն հանցագործության» մեջ:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ

## ԱՄՆ-ի կառավարությունը մեղադրվում է 224 մլն դոլարի ծրագրեր գողանալու մեջ



**ԱՄՆ-ի զինված ուժերը մի քանի տարի օգտվել են նյութատեխնիկական ապահովման ծրագրերի ընդօրինակված պատճեններից: Այդ գողացված պատճեններն օգտագործվել են ռազմական առաքելությունների ժամանակ զինվորների տեղաշարժման անվտանգ երթուղիների ստեղծման համար: Ծրագրային ապահովման հեղինակներն այժմ պահանջում են փոխհատուցել իրենց վնասները, որոնք գնահատվում են գրեթե քառորդ միլիարդ դոլար:**

**Վերջին տարիներին ԱՄՆ-ի կառավարությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ ուրիշ պետություններում ակտիվորեն պայքարում է բանագողության եւ պատճենումների դեմ: TorrentFreak կայքէջը հիշեցնում է փոխնախագահ Ջո Բայդենի խոսքերը, որը ընդօրինակումը համարում է «գողություն» եւ նորանոր միջոցներ է ձեռնարկում բանագողության դեմ պայքարելու համար:**

**Սակայն պարզվում է, որ Apptricity ընկերությունը ստիպված դատի է տվել հենց ԱՄՆ-ի կառավարությանը, իշխանություններին մեղադրելով ընկերության ծրագրային արտադրանքների անօրինական օգտագործման մեջ: 2004 թվականին Apptricity-ն պայմանագիր էր ստորագրել բանակի հետ, վաճառելով ծրագրային այն արտադրանքների արտոնագիրը, որոնք ապահովում են զորքերի տեղաշարժման հաշվարկները: Գործարքի արդյունքների համաձայն, զինվորականները կարող էին ծրագիրն օգտագործել 150 համակարգիչների վրա:**

**Ձեռք բերված ծրագիրն օգտագործվել է բազմաթիվ ռազմական գործողություններում, երկրաշարժերի եւ այլ աղետների ժամանակ: Ինչպես պարզվում է, զինվորականներն իրենց աշխատանքում չեն սահմանափակվել 150 համակարգիչներով. նրանք չարտոնված պատճեններ են տեղադրել հազարավոր մեքենաների վրա:**

**Ըստ էության «բանագողային» ծրագրային ապահովումը հայտնաբերվել է 93 սերվերի եւ 9000 համակարգչի վրա: Նկատի առնելով, որ ընկերության գնացուցակով սերվերի վրա ծրագրային ապահովման տեղակայման արժեքը 1,35 մլն դոլար է, իսկ համակարգչի վրա՝ 5 հազար դոլար, Apptricity-ն ԱՄՆ-ի կառավարության գործողությունների հետեւանքով իր կրած կորուստները գնահատել է 224 մլն դոլար:**

**Կառավարությունը խոստովանել է, որ առանց թույլտվության տեղադրել է ծրագրի բազմաթիվ պատճեններ: Երկարատեւ բանակցություններից հետո երկու կողմերը հանգել են համաձայնության, ըստ որի պետությունը Apptricity-ին կվճարի 50 մլն դոլար: Չնայած տհաճ միջադեպին, Apptricity-ն մտադիր է շարունակել համագործակցությունն ամերիկացի զինվորականների հետ: Նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը առայժմ չի մեկնաբանել միջադեպը:**

## Գուլնարա Քարիմովան հետաքրքրում է Ֆրանսիայի արդարադատությանը



Վերջին տասնամյակներին Ուզբեկստանը կառավարող 75-ամյա նախագահ Իսլամ Քարիմովի երկու դուստրերից ավագը՝ 41-ամյա Գուլնարա Քարիմովան հայտնվել է շվեյցարացի եւ ֆրանսիացի իրավապահների ուշադրության կենտրոնում: Դեռ տարեսկզբին Շվեյցարիան Ֆրանսիայից միջազգային փոխօգնություն էր խնդրել Գուլնարա Քարիմովային առնչվող դատաքննության շրջանակներում: Խոսքը Ֆրանսիայում անշարժ գույքի անօրինական ձեռքբերման մասին է:

«Ֆիգարո» թերթը հաղորդում է տվյալ գործի հետ կապված որոշ մանրամասնություններ: Այս տարվա փետրվարի 14-ին Ֆրանսիայում X անձնավորության նկատմամբ դատաքննություն է սկսվել «կազմակերպված հանցախմբով փողերի լվացման» եւ «օտարերկրյա գործակալի կաշառման» կասկածների հիման վրա:

Ֆրանսիայի արդարադատության մարմինները ենթադրում են, որ ուզբեկ բռնակալի ավագ դուստրը անհայտ ձեւերով Ֆրանսիայում ձեռք է բերել անշարժ գույքի մի տպավորիչ հավաքածու: Խոսքը միջերկրածովյան Սեն-Տրոպե առողջավայրի մոտերքում գտնվող առանձնատան, Փարիզի շքեղ 16-րդ շրջանում եւ Նեյի արվարձանում գտնվող բնակարանների, Գրուասե դղյակի (Փարիզի տարածաշրջան) մասին է:

Գործի շրջանակներում դատավորը հետաքրքրվում է նաեւ Գուլնարայի քրոջ՝ Լոլայի ունեցվածքով, որը, ի դեպ, Ուզբեկստանի մշտական ներկայացուցիչն է ՅՈՒՆԵՍԿՕ-ում (Փարիզ):

Ինչ վերաբերում է Գուլնարային, նա Ուզբեկստանում հայտնի գործարարի եւ փոփ երգչուհու համբավ ունի: Երկրի առավել եկամտաբեր ոլորտները (գազ, բամբակ, ոսկի, բջջային հեռախոսակապ եւ այլն) Քարիմովների ընտանիքի եւ մասնավորապես Գուլնարայի ձեռքին են: «Ֆիգարոն» ընդգծում է, որ Ուզբեկստանում որեւէ խոշոր ձեռնարկություն չէր կարող հաստատվել եւ գործունեություն ծավալել, եթե չստանար Գուլնարա Քարիմովայի համաձայնությունը եւ եկամուտները չկիսեր նրա հետ: Թերթը նաեւ տեղեկացնում է, որ վերջերս Քարիմովների ընտանիքում տարաձայնություններ են ծագել: Մասնավորապես Գուլնարայի մայրը սպառնում է նրան զրկել ունեցվածքից:

ԱԶԳ Մշակույթ

# Բալետից մինչեւ տիեզերական էներգիա



Պիռուետ, տուռ, շենե, ժետե, բասման տանձյու, գրան բատման, ռոնդե ժան անլեռ, պլիե։ Բալետային շարժումների անվանումների այս շարքը կարծես առաջին հայացքից մեզ ոչինչ չի տալիս եւ շատ քչերը գիտեն, որ հենց այս շարժումների միջոցով մարմինը լեզու է առնում ու «կապ հաստատում» տիեզերքի հետ, ասում է Սպենդիարյանի անվ. օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր խորեոգրաֆ Ռուդոլֆ Խառատյանը։

Հայաստանում բալետի ուրաքանչյուր պարող նախ 8 տարի սովորում է պարարվեստի պետական քոլեջում, ապա սկսում է ծավալել բալետային գործունեություն։

Մկանները մարզելը, պարային դիրքերը սովորելն ու հրաշալի պարելը դեռ չի նշանակում, որ տիրապետում ես բալետի գաղտնիքներին։

Ոչ բոլոր բալետի արտիստներն են իրենց մեջ բացում շարժումների հետեւում ընկած փակագծերն ու վարագույրը։ Բալետմայստերը **«Ազգի»** հետ զրույցում հավաստիացրեց, որ բալետն ու տիեզերքը փոխկապակցված են եւ գիտակցաբար օգտագործելով ամեն մի շարժում՝ կարող ես կապ հաստատել տիեզերքի հետ ու ստանալ էներգիա։

Վաշինգտոնում դասավանդելու տարիներին Ռուդոլֆ Խառատյանը հենց դասական պարերի մեջ գտավ այն «մանրուքները», որոնց հիման վրա ստեղծեց իր դասավանդման սխեման։ Ի դեպ, այդ շրջանում Ռ. Խառատյանը փնտրում էր նորը, ժամանակակիցը, սակայն բախտի ճանապարհը նրան նորից կապեց դասականին։

«Մարդու մարմինը գործիք է, որն ունի մի քանի սկզբունք՝ անդըդան, անդըդոր՝ ներս ու դուրս։ Իսկ մարմնի մեջ առկա են արական ու իգական էներգիաներ, որոնք սկսում են աշխատել մարդու համակցված շարժումներով։ Աջ կողմը՝ արական՝ դրական, իսկ ձախը՝ իգական՝ բացասական։ Թե ինչու է նման կերպ բաշխվել, դժվար է ասել»,- ասաց Ռ. Խառատյանն ու ավելացրեց. «Մարդը՝ որպես հաղորդիչ, պետք է սովորի, թե ինչպես պետք է կառավարել տիեզերքից եկած էներգիան։ Մարդը դառնալով հաղորդիչ, էներգիայի հոսքի միջոցով մաքրում է ներքինը՝ հոգին ու մարմինը»,- ասաց Ռ. Խառատյանը։

Խորեոգրաֆի խոսքերով, էներգիան ինֆորմացիա է։ Մարմինը պետք է մարզել այնքան, որ պարողը կարողանա շարժումների տեխնիկային այնպես տիրապետել, որ այն վերածի զգացմունքի ու դրա սլաքն ուղղի հանդիսականին։

Ռուդոլֆ Խառատյանը ցավով փաստում է, որ այսօր պարարվեստի պետական քոլեջում միայն ֆիզիկական շարժումների վրա է շեշտը դրված, իսկ թե դրա հետեւում ինչ է ընկած, չի սովորեցվում, ու մեր այսօրվա պարողները դրան չեն տիրապետում։

Տարածությունն ու ժամանակը բալետի պարողը զգում է շարժումներով։ Բաց ձեռքերով տարատեսակ շարժումներն ու դիրքերը տարածության նշանն է, իսկ կլորացված ձեռքերը՝ ժամանակի։ Մարմինը ճկվելով տարածության ու ժամանակի միջեւ՝ էներգետիկ կապ է հաստատում տիեզերքի հետ։

Մարդու «անտենաները» ընդունում, ստանում են էներգիան վերեւից, որին օգնում է մտքի կենտրոնացումը։

Հետաքրքրական է, որ իգական եւ արական էներգիաները, ինչպես լույսն ու ստվերը անընդհատ հարմոնիայի մեջ են։ Բալետը ձգտում է անընդհատ վեր թռչել, հասնել երկնայինին եւ դուրս գալ ձգողական ուժից։

Ռ. Խառատյանը երիտասարդների հետ անցկացվող վարպետաց դասի ընթացքում նրանց փորձեց սովորեցնել մարմնի լեզվով հաղորդակից լինել տիեզերքի հետ։ Մեջբերենք մի հատված. «Ձեռքերը բարձրացնում ենք վեր, փորձում ենք ափերով զգալ մեզնից մի փոքր հեռու գտնվող պաստառը, մարմնի ծանրությունը տեղափոխում ենք կրունկների վրա, արտաշնչում ենք, ապա փորձում գլխի հոգեւան միջոցով տիեզերքից էներգիա ստանալ»։ Այս վարժությունների շարքը մի փոքր երկար էր եւ հաշվի առնելով մեր ընթերցողի համբերությունը, վարժություններից կներկայացնենք միայն սա։ Խառատյանը բալետի պարողներին նաեւ խորհուրդ տվեց, որպեսզի փորձեն իրենց միտքը տարածել վերջույթների վրա՝ միաժամանակ կառավարելով դրանք։ Այդ ժամանակ ճիշտ կառավարելով մարմինը, կարող են ճիշտ պատգամ ուղարկել հանդիսատեսին։

Հատկանշական է, որ նախկինում՝ դարեր առաջ եղել են նաեւ ծիսական պարեր, որոնց միջոցով մեր նախապապերը կապ են հաստատել տիեզերքի հետ, էներգետիկ դաշտով անձրեւ են տեղացրել եւ այլն։ Իսկ այսօր այդ գաղտնիքը բացահայտում է Ռ. Խառատյանը։

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Էրիկ Պողոսյանը վերադառնում է իր արմատներին

**Հոլիվուդյան հայտնի վաթսունամյա դերասան Էրիկ Պողոսյանը ծիծաղելով է հետ նայում իր անցած ճանապարհին, վերլուծում է մենախոսությունները սեքսի եւ նյութի չարաշահման վտանգների մասին, պատրաստվելով լույս ընծայել իր «100 մենախոսություններ» հատորը։ «Ասոշիեյթեդ պրեսի» թղթակից Մարկ Քենեդիի «Ինչո՞ւ հարյուր» հարցին նա պատասխանել է. «Մի օր ինքս ինձ հարց տվեցի, թե քանի՞ մենախոսություններով եմ հանդես եկել եւ հաշվեցի մինչեւ 99։ Եթե դրան ավելացնենք նաեւ «Talk Radio» ֆիլմի երիտասարդի մտածմունքներն ու խոհերը, կունենանք 100 մենախոսություն»։**

**«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթում արտատպված Քենեդիի հոդվածից տեղեկանում ենք, որ նա մենախոսությունների ժանրը թողել է 2000 թվականին, «տեղափոխվելու համար բոլորովին այլ աշխարհ, գրքերի եւ պատմության աշխարհը»։ «Մենախոսությունները դիտարժան էին, երբ մի ինչ-որ թեմայի շուրջ էին հյուսվում, բայց ժամանակի ընթացքում դրանք կորցրեցին ներթափանցելու իրենց կարողությունը», նշել է նա։**



**«Այդ ժանրը երբեւիցե կվերադառնա՞» հարցին Պողոսյանը պատասխանել է. «Չեմ կարծում, որովհետեւ էժան է նստում նախապատրաստվել դրան։ Բայց դա ավելի հարմար է, երբ դու սոված ես եւ այլընտրանք չունես»։**

**Պողոսյանը նաեւ նոր «շոու» ծրագրով է հանդես գալիս ներկայիս (սկսած հոկտեմբերի 19-ից), որտեղ ի մի է բերել 1980-2000 թվականների իր 6 մենախոսություններից հատվածներ։ Ընտրվածների թվում են «Ճակատով հատակին մեխ մեխելը» եւ «Արթնացիր եւ սուրճի հոտը զգա» մենախոսությունները։ Այս վերջինի համար, նա, ի դեպ, արժանացել էր Օբիի 3 մրցանակների։**

**Նոր շոուն եւ նոր գիրքը մաս են կազմում հատուկ մի ծրագրի, որի իրականացմանը մասնակցելու են իր ընկերներից շատերը՝ Լիվ Շրեյբերը, Բոբբի Կանավալը, Վինսենս Դոնոֆրիոն, Ջեսիկա Հեխտը եւ Ջերեմի Սիստոն։ Նրանք օժանդակելու են, որ Պողոսյանի 100 մենախոսությունները այս աշնանը հասու լինեն օն-լայն ձեւով։**

**Պողոսյանը պիեսների հեղինակ է (նրա «Sub Urbia» պիեսը հետագայում ֆիլմի էր վերածվել) եւ հանդես է եկել մի շարք ֆիլմերում, ինչպիսիք են Ռոբերտ Օլտմանի «The Caine Mutiny Court Martial»-ը եւ «Under Siege-2»-ը Սթիվն Սիգալի կողքին։ Նա նաեւ մի շարք գրքերի հեղինակ է եւ պատրաստվում է հրատարակել «Նեմեսիս» խորագրով իր նոր գիրքը թուրք ղեկավար անձնավորություններին սպանած հայորդիների մասին։**

**Պատասխանելով լրագրողի վերջին հարցին, թե ինչպիսի՞ն է պատկերացնում իր հետագա կարիերան, նա ասել է. «Իրականում չգիտեմ, բայց ցանկանում եմ խաղալ դրամատիկ մի ֆիլմում։ Կատարել չարագործի դեր, միգուցե նաեւ արյունարբու վամպիրի դեմ»։**

Հ. Ծ.

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# «Ստեղծագործելը հոգուս հանգստությունն է». Վլադիմիր Սահակյան



***1953 թ-ին ծնված Վլադիմիր Սահակյանը մասնագիտությամբ կինոռեժիսոր է, ավարտել է կինոյի եւ ռեժիսուրայի բաժինը։ Իր ողջ գիտակցական կյանքում ստեղծագործել է, սակայն երբեք չի տպագրել իր նյութերը։ Խորը եւ յուրահատուկ մտքի թռիչքով օժտված այս մարդը իր ստեղծագործություններում՝ հոգին բաց անելով փորձել է ներկայացնել իրականը, իր իսկ ստեղծած երեւակայական գրչով…***

**- Դուք Ձեր հեղինակային ֆիլմի սցենարն ունեք՝ «Աստծո աչք» խորագրով։ Ի սկզբանե ինչո՞վ եք ոգեշնչվել, եւ ո՞րն է եղել հիմնական պատճառը նման ֆիլմի սցենար գրելու։**

- Ես հայ եմ՝ մանկուց հավատացյալ, եւ միշտ կարծել եմ, որ Աստծու պահած եմ։ Ես պարզապես հավատում եմ, եւ որն էլ, կարծում եմ, ամեն բանի սկիզբն է։ Ընկերներով շատ դեպքեր են եղել, երբ հավաքվել ենք, քննարկել, յուրաքանչյուրս մեր մտքերն ենք հայտնել. դրանք պարզապես մտքեր չէին, բոլոր կարծիքներն էլ կարելի է ասել հանճարեղ էին։ Այդ ժամանակ ինձ հետ էր նաեւ իմ հարեւանը՝ Ռոբերտ Սահակյանը, որն ինձ հետ հավասար պայքարել է ավարտին հասցնելու մեր համատեղ ջանքերով մտածված ֆիլմը։

**- Ըստ ձեզ, ձեր գրած ֆիլմը ամբողջակա՞ն էր, չկա՞ր որեւէ բացթողում, որը կցանկանայիք լրացնել։**

- Բացթողումներ չկան, պարզապես կան բաներ, որոնք ես չեմ տպագրել եւ չեմ գրել, բայց ամեն բան մտածված է եղել։ Պատրաստվում էի նաեւ նկարել, բայց ֆինանսական պատճառներով չստացվեց։

**- Իսկ այդ դեպքում չե՞ք փորձել դիմել որեւէ կազմակերպության, կամ հեռուստաընկերությունների, որոնց կողմից միգուցե կխրախուսվեր ձեր աշխատանքը։**

- Սուտ է, սուտ. նրանք չէին հասկացնի այդ գումարը…

**- Հիմնականում ի՞նչն է ձեզ ոգեշնչում ստեղծագործելիս։**

- Հնարավոր է՝ չհավատաք, բայց ես ոչնչով չեմ ոգեշնչվում։ Ոգեշնչանքը, կարելի է ասել, միշտ իմ մեջ է։ Ես կարող եմ քնած լինել, կողքիս լինի մատիտս, թուղթ եւ մութ տարիների մոմ, եւ ահա, պատրաստ եմ ստեղծագործելու։ Այդպիսի ոգեշնչանքով ստեղծված բանաստեղծություններից մեկը անվանել եմ «Երկվորյակ»։ Այն սկսեցի գրել, երբ գիշերը արթնացել էի եւ կանգնել պատուհանի մոտ. մոմի արտացոլած լույսի տակ նկատեցի իմ երկրորդ ես-ին։. Ես ամբողջովին ուրիշ դեմք տեսա, եւ հենց այդ ժամանակ հասկացա, որ ես իմ երկվորյակի հետ էի։ Շատ հետաքրքրական է՝ ամեն մարդ կառուցված է երկու մարդուց. քո ես-ը այն մարդն է, որի հետ դու խոսում ես, կիսվում, բարկանում, ժպտում եւ միայն հասուն տարիքում ես հասկանում, որ դու մենակ չես։

**- Իսկ ձեր ստեղծած յուրաքանչյուր գործում որքա՞ն եք կարողանում պահպանել ազգային արժեքը եւ ի՞նչ նշանակություն ունի այն ձեզ համար։**

- Իհարկե պետք է ոգեշնչված լինի ազգայինով։ Կարծում եմ, որ հիմնականում պետք է լինի պատմական թեմա, որն ավելի վառ կարտահայտի ազգայինը։ Ինձ համար բավական է, որ տվյալ ստեղծագործողը հայ է, եւ որ դեպքը կատարվել է Հայաստանում, բայց թեման պետք է հետաքրքրական լինի նաեւ ազգայինից դուրս։ Կարող եմ վստահ ասել, որ մեր կինոն տուժել է, քանի որ դուրս չէինք գալիս մեր ազգային սահմաններից. ուրիշներին դժվար թե հետաքրքրեր մեր կինոն… Պարզապես շատ ազգայնացված լինել չի կարելի։

**- Երբեւէ մտածե՞լ եք ձեր ստեղծագործություններով գումար վաստակելու մասին։**

- Ոչ, ստեղծագործելը իմ հոգու հանգստությունն է, կարելի է ասել՝ հոբբին, որի միջոցով չեմ ցանկացել փող աշխատել։ Ստեղծագործող հոգին միշտ իմ մեջ է, եւ յուրաքանչյուր գործում իմ ստեղծագործական եռանդն եմ դնում։ Եվ ի վերջո, եթե մի բանի մեջ կա արվեստ, դա չի կարող մահանալ։

**- Արվեստը իր ամբողջ հմայքով ի՞նչ է ձեզ համար։**

- Կյանքն է, որով ապրում եմ եւ որով արտահայտում եմ հոգուս բոլոր զգացմունքները։

**- Սերը ձեր ստեղծագործություններում եւ սերը իրական կյանքում ինչպե՞ս եք արտահայտել։**

- Գրեթե ամբողջությամբ արտահայտել եմ զգացմունքներս։ Սիրել եմ գժի պես. կնոջս հանդեպ ունեցած սերս այնքան պատկերավոր եւ իրական է պատկերված ստեղծագործություններիս մեջ, որ անգամ նրան էր զարմացնում, թե ինչպես եմ կարողացել հասկանալ, բացահայտել նրա էությունը։ Ասեմ նաեւ, որ աստղակերպով ջրհոս եմ. դա նշան է սիրո, տաղանդավոր լինելու… Ամեն մարդ չէ, որ կարող է սիրել, եւ եթե չլիներ սերը, միգուցե ես չստեղծագործեի։

Հարցազրույցը վարեց
ՔՆԱՐԻԿ ՌԱՓԱՅԵԼՅԱՆԸ

# Հենրիխ Մխիթարյանը 100 լավագույն ֆուտբոլիստների ցանկում է



FourFourTwo ամսագիրը ՀՀ հավաքականի եւ Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանին ընդգրկել է մրցաշրջան-2013-ի 100 լավագույն ֆուտբոլիստների ցանկում: Մխիթարյանը 66-րդ հորիզոնականում է:

«Դոնեցկի «Շախտյորից» հեռանալուց հետո Հենրիխ Մխիթարյանն իսկական սուպերաստղ դարձավ: Նրան հաջողվեց Լոնդոնում տխրեցնել «Արսենալի» երկրպագուներին, ինչպես նաեւ արժանի փոխարինող դառնալ Մարիո Գյոտցեին: Նա Գերմանիայի ընթացիկ առաջնության 10 խաղում դարձել է 3 գոլի եւ 5 գոլային փոխանցման հեղինակ: Այս պահին Հենրիխը սովորում է 6-րդ լեզուն՝ գերմաներենը: Նա Հայաստանի հավաքականի առաջատարն է: 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում նա դարձել է 3 գոլի եւ 2 գոլային փոխանցման հեղինակ: Ֆուտբոլիստը կատարել է 416 փոխանցում, 20 անգամ մրցակցից խլել է գնդակը», գրում է ամսագիրը:

Whoscored.com-ն էլ Հենրիխ Մխիթարյանին ընդգրկել է չեմպիոնների լիգայի 5-րդ տուրի խորհրդանշական հավաքականում:

Իսկ աշխարհի 10 լավագույն ֆուտբոլիստների ցանկը գլխավորում է Մադրիդի «Ռեալի» հարձակվող Քրիշտիանու Ռոնալդուն: Նրան հաջորդում են Լիոնել Մեսին եւ Ֆրանկ Ռիբերին: Լավագույն տասնյակում են նաեւ Ռադամել Ֆալկաոն, Անդրես Ինիեստան, Զլատան Իբրահիմովիչը, Ֆիլիպ Լամը, Գարեթ Բեյլը, Ռոբին վան Պերսին եւ Տիագո Սիլվան:

Իտալական «Նապոլիի» հետ խաղում Հենրիխ Մխիթարյանի գործողությունները բարձր գնահատականի է արժանացրել իսպանական AS պարբերականը. «Այդ հանդիպման իսկական հերոսը հայ կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանն է: Այդ ֆուտբոլիստը նման է Լիոնել Մեսիին՝ նրա լավագույն դրսեւորումներով»:

## Կառլեն Մկրտչյանն «Անժիի» կազմում կշարունակի պայքարը Եվրոպայի լիգայում



Կարագանդայի «Շախտյորը», որի կազմում հանդես է գալիս Գեւորգ Ղազարյանը, ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի 5-րդ տուրում սեփական հարկի տակ 0-2 հաշվով պարտվելով L խմբի առաջատար ՊԱՕԿ-ին, դուրս մնաց հետագա պայքարից: Հույների հետ պայքարը կշարունակի նաեւ հոլանդական «Ալկմարը», որը 2-0 հաշվով հաղթեց Իսրայելի «Մաքաբիին»:

Իսկ ահա «Անժին», որի կազմում է Կառլեն Մկրտչյանը, հաջողությամբ լուծեց հաջորդ փուլ դուրս գալու խնդիրը: «Շերիֆի» հետ խաղն ավարտելով ոչ-ոքի (1-1), «Անժին» 8 միավորով 2-րդ տեղը գրավեց K խմբում: Խմբի հաղթող «Տոտենհեմը» ժամկետից շուտ էր նվաճել 1/16 եզրափակիչի ուղեգիրը: Անգլիական ակումբը հյուրընկալվելիս 2 անպատասխան գնդակ խփեց նորվեգական «Տրոմսեի» դարպասը: Կազանի «Ռուբինն» էլ պաշտոնապես ձեւակերպեց հաջորդ փուլի ուղեգիրը՝ ոչ-ոքի (1-1) խաղալով «Մարիբորի» հետ: 2-րդ ուղեգրի համար պայքարող «Վիգանի» եւ «Զուլտե Վարեգեմի» մրցավեճում 2-1 հաշվով հաղթեցին հյուրերը:

A խմբում հանդես եկող Կրասնոդարի «Կուբանը» սեփական հարկի տակ 4-0 հաշվով ջախջախեց շվեյցարական «Սանկտ Գալենին», որը նախորդ փուլում պայքարից դուրս էր թողել Մոսկվայի «Սպարտակին»: Այս խմբից ուղեգիր նվաճեց «Վալենսիան»՝ հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթելով «Սուոնսիին»:

B խմբում ընդգրկված Օդեսայի «Չեռնոմորեցը» 2-1 հաշվով հաղթելով Զագրեբի «Դինամոյին», 7 միավորով հավասարվեց «Էյնդհովենին»: Վերջինս մրցակցի դաշտում զիջեց «Լուդոգորեցին»: Այդ հաղթանակի շնորհիվ բուլղարական ակումբը մտավ հաջորդ փուլ:

E խմբում հանդես եկող «Դնեպրը», որ նախորդ տուրում արդեն ապահովել էր ուղեգիրը, 4-1 հաշվով հաղթեց «Պանդուրիին»: Խմբի առաջատար «Ֆիորենտինան» գոլազուրկ ոչ-ոքի խաղաց «Պասուշի» հետ:

G խմբում կայացած սկզբունքային խաղում Կիեւի «Դինամոն» հյուրընկալվելիս 1-3 հաշվով պարտվեց բելգիական «Գենկին»: Վերջինս 11 միավորով գլխավորում է աղյուսակը: 7 միավորով 2-րդ տեղում «Դինամոն» է:

Ահա կայացած մյուս հանդիպումների արդյունքները. «Էլֆսբորգ»-«Զալցբուրգ»՝ 0-1, «Էսբերգ»-«Ստանդարտ»՝ 2-1, «Բորդո»-«Այնտրախտ»՝ 0-1, ԱՊՕԵԼ-«Մաքաբի»՝ 0-0, «Ռապիդ»-«Թուն»՝ 2-1, «Սլովան»-«Ֆրայբուրգ»՝ 1-2, «Սեւիլիա»-«Էշտորիլ»՝ 1-1, «Լիոն»-«Բետիս»՝ 1-0, «Ռիեկա»-«Վիկտորիա»՝ 0-0, «Լեգիա»-«Լացիո»՝ 0-2, «Տրաբզոնսպոր»-«Ապոլոն»՝ 4-2:

## Ռամոսը սպառնում է հեռանալ «Ռեալից»

Մադրիդի «Ռեալի» եւ Իսպանիայի հավաքականի պաշտպան Սերխիո Ռամոսը հավանաբար կհեռանա թիմից: Պատճառն ակումբի նախագահ Ֆլորենտինո Պերեսի հետ կոնֆլիկտն է: Դեռեւս օգոստոսին Ռամոսը վիճել էր վերջինիս հետ՝ սպառնալով հեռանալ թիմից, եթե աշխատավարձը չբարձրացնեն: «Ռեալի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին էլ դժգոհ է իսպանացի ֆուտբոլիստի խաղից:

Ռամոսը մինչեւ 2017-ը պայմանագիր ունի «Ռեալի» հետ: Նրա տարեկան աշխատավարձը 5,5 մլն եվրո է: Նրանով հետաքրքրվում են անգլիական «Մանչեսթր Սիթին» եւ ֆրանսիական ՊՍԺ-ն, որոնք պատրաստ են ֆուտբոլիստին տարեկան 7,5-9 մլն եվրո աշխատավարձ վճարել: «Ռեալը» Ռամոսի համար 65 մլն եվրո է պահանջում:

## Իբրահիմովիչը Տարվա մարդ

GQ ամսագիրը Ֆրանսիայի Տարվա մարդ է ճանաչել ՊՍԺ-ի շվեդ հարձակվող Զլատան Իբրահիմովիչին: Վերջինս մեծ ներդրում ունեցավ թիմի հաջողությունում, որը երկար տարիներ չէր նվաճել երկրի չեմպիոնի տիտղոսը: Շվեդ հարձակվողը նաեւ 30 գնդակով դարձավ Ֆրանսիայի առաջնության լավագույն ռմբարկու եւ ֆուտբոլիստ:

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանի հաղթանակը հաղթական չդարձավ



Ինչպես նախորդ տուրում, Չինաստանի հավաքականի հետ մրցախաղում էլ Լեւոն Արոնյանն առաջինն ավարտեց իր մրցավեճը ու կրկին վստահ անցկացնելով Լի Չաոյի հետ պարտիան, արդեն 35-րդ քայլին սեւերով հաղթանակ տոնեց: Ցավոք, նրա թիմակիցները չկարողացան զարգացնել հաջողությունը:

Սերգեյ Մովսիսյանը սպիտակներով պարտվեց Դինգ Լիրենին: Գաբրիել Սարգսյանը թեեւ մեկ զինվոր ավելի ուներ, սակայն Յու Յանգիին հավերժական շախի շնորհիվ հաջողվեց պարտիան ավարտել ոչ-ոքի: Ինչպես առաջին տուրում ռուսների հետ մրցավեճում, այս անգամ էլ մրցախաղի ելքը պետք է վճռվեր Վլադիմիր Հակոբյանի մասնակցությամբ պարտիայում: Ցավոք հայ շախմատիստը պարտվեց Բու Խիանգզիին: Այսպիսով ՀՀ հավաքականն առաջին պարտությունը կրեց՝ 1,5-2,5:

Մեր ընտրանին 5 միավորով 2-րդ տեղում է: Այսօր Հայաստանի հավաքականը 5-րդ տուրում կհանդիպի ադրբեջանցիների հետ:

Հաղթարշավը շարունակեց Ուկրաինայի հավաքականը՝ 3-1 հաշվով պարտության մատնելով գերմանացիներին: Ուկրաինացիները 8 միավորով շարունակում են միանձնյա գլխավորել աղյուսակը: Ռուսներին ադրբեջանցիների նկատմամբ հաղթանակ (2,5-1,5) պարգեւեց Սերգեյ Կարյակինը՝ պարտության մատնելով Էլթաջ Սաֆարլիին: ԱՄՆ-ի հավաքականը հաղթեց Եգիպտոսի շախմատիստներին՝ 3,5-0,5: Վարուժան Հակոբյանը հաղթեց Իբրահիմ Հասան Լաբիբին: Հոլանդացիներն էլ առավելության հասան թուրքերի նկատմամբ՝ 3,5-0,5:

Ռուսները եւս վաստակել են 5 միավոր: Նրանց մեկ միավորով են զիջում Ադրբեջանի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Չինաստանի եւ Հոլանդիայի հավաքականները: Թուրքիան ունի 2 միավոր: Եգիպտոսի հավաքականն առայժմ միավոր չի վաստակել:

## Կասպարովը Կառլսենի գլխավոր մրցակիցներ է համարում Արոնյանին եւ Կրամնիկին

Շախմատի աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովն իր թվիթերի էջում նշել է, որ հաջորդ մրցափուլում Մագնուս Կառլսենի հետ շախմատային թագը վիճարկելու ամենամեծ հնարավորությունները ունեն Լեւոն Արոնյանն ու Վլադիմիր Կրամնիկը:

Հիշեցնենք, որ աշխարհի առաջնության եզրափակիչ մրցախաղի ուղեգրի համար 8 հավակնորդների մրցաշարը կայանալու է 2014-ի մարտի 11-ից ապրիլի 1-ը Ռուսաստանի Խանտի Մանսիյսկ քաղաքում:

Հետաքրքրական է, որ Կրամնիկի մասին հավակնորդների նախորդ մրցաշարի մեկնարկից առաջ Կասպարովը թերահավատորեն էր արտահայտվել. «Կրամնիկին էլ հաղթողի հավակնորդների շարքից դուրս չէի հանի: Վերջերս նրա 2-րդ երեխան ծնվեց: Նման դեպքերում մարդիկ սկսում են շեղվել հիմնական գործից եւ այլ բաների մասին մտածել»:

Իսկ Վլադիմիր Կրամնիկը վերջերս տված հարցազրույցում նշել է, որ հավակնորդների առաջիկա մրցաշարն իր համար հավանաբար վերջինը կլինի. «Հավանաբար դեռ 2-3 տարի կխաղամ: Իսկ 40-ից հետո կսկսեմ այլ բանի մասին մտածել: Վարկանիշով ես իրավունք ունեմ մասնակցելու հաջորդ տարի կայանալիք հավակնորդների մրցաշարին, այնպես որ լրջորեն եմ նախապատրաստվելու: Կարծում եմ, որ հնարավորություն ունեմ հաղթելու եւ շախմատային թագը վիճարկելու աշխարհի չեմպիոնի հետ»:

## Բաբուջյանը կես միավոր է զիջում առաջատարներին

Հնդկաստանում շարունակվող շախմատի մրցաշարի 5-րդ տուրը հաջող էր հայ շախմատիստների համար: Լեւոն Բաբուջյանը հաղթեց Միխայիլ Մոժարովին եւ 4 միավորով զբաղեցրեց 5-րդ տեղը: Նա ընդամենը կես միավոր է զիջում աղյուսակը գլխավորող ուկրաինացի Վլադիսլավ Բորովիկովին եւ հնդիկ Սետուրամանին:

Սամվել Տեր-Սահակյանը ոչ-ոքի խաղաց Սվամինաթան Սունիայի հետ եւ 3,5 միավորով 14-րդ տեղում է: Նույնքան միավոր ունեն նաեւ Հովիկ Հայրապետյանն ու Տիգրան Ս. Պետրոսյանը: Հովիկը հաշտություն կնքեց Պոնուսվամի Կոնգուվելի հետ, Տիգրանը հաղթեց Ռայ Մանանին: 2,5 միավոր է վաստակել Վահե Բաղդասարյանը՝ ոչ-ոքի խաղալով Վիգնեշի հետ: 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Մարիա Գեւորգյանը, որի մրցակիցը Վարշինին էր:

## Կրկին պարտություն

Հանդբոլի «ՀՀ վարչապետի գավաթի» խաղարկության 2-րդ տուրում Հայաստանի հավաքականը երեկ կրկին անհաջող խաղաց՝ 21-32 հաշվով զիջելով Վրաստանի ընտրանուն: Ռուսներն էլ 43-26 հաշվով առավելության հասան ուկրաինացիների նկատմամբ: Մրցաշարի հաղթողը կորոշվի այսօր կայանալիք Ռուսաստան-Վրաստան մրցախաղում: Մեր հավաքականը կմրցի ուկրաինացիների հետ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Երբ կինոարտադրանքը հանդես է գալիս որպես հակամշակույթ

Դերենիկ Դեմիրճյանը իր «Հայը» բնութագրականում գրում է. «Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչեւ մահ: Սա նրա անհրաժեշտությունն է»: «Արմենիա» հեռուստաընկերության «Հարազատ թշնամի» հեռուստասերիալը գրողի ասածը դարձնում է համոզմունք: Պատահաբար դարձա այս ֆիլմի վայրենի դրվագների ականատեսը, ու թվաց, որ դրանք մասնավոր հատվածներ են: Հետագայում ուշադրությամբ հետեւեցի մի քանի սերիայի, եւ հիասթափությունը խորն էր: Իսկապես հնարավոր չէ անտարբեր անցնել այսպիսի անորակ, հակամշակութային, հակադաստիարակչական կինոարտադրանքի կողքով: Հայի սպառող տեսակ, շուկայականություն, ագրեսիա եւ նեւրոզային տրամադրություն. այսպիսին է հեռուստասերիալի բովանդակային ֆոնը: Սերիալում ակնհայտ են այլասերումը, անհարգալից վերաբերմունքը ազգային արժեքների, մասնավորապես լեզվի նկատմամբ: Ֆիլմի սյուժեն, դեպքերի ու իրադարձությունների ընթացքը այլասերումն ու արժեզրկումը հասցված են աղետալի չափերի: Եվ այստեղ է, որ մշակույթը դառնում է հակամշակույթ, ընկած վիճակ ու գետնաքարշություն:

Առաջին հայացքից թվում է՝ ֆիլմում արտացոլված է ընտանեկան դրամայի հոգեբանական վերլուծություն, բայց մեկ սերիայի դիտումը բավական է, որպեսզի հասկանանք, որ բարոյական հոգեբանության փոխարեն ամեն ինչ կառուցված է կենսաբանական բնազդի վրա: Ագրեսիան թափանցել է մարդկային հարաբերությունների ամենամաքուր տարածքը ընտանիք, որը հայերիս համար չափանմուշային է: Երկու իրար ատող ընտանիքների հարաբերությունները հասցված են թշնամության ու ագրեսիայի, այլասյացության ու ապամարդկայնացման: Ընդ որում երկու թշնամի ընտանիքների ամուսինները ընկերներ են ու խնամիներ: Նույն այդ ընտանիքների թշնամության ուղղակի զոհ է դառնում «Բալայանների» ընտանիքի որդու Սպարտակի եւ «Բեկնազարյանների» ընտանիքի դուստր Էմիլիի «սերը»: Ինչու ենք «սերը» չակերտների մեջ առնում, որովհետեւ այդ այսպես կոչված զգացմունքը, որ փորձում են խաղալ երկու հերոսները, կառուցված է բնազդների ու սոսկ սեռական համակրանքի վրա: Այդ քնքուշ աղջիկը, որ տառապող կերպար է, ըստ էության, կրակն է ընկել գռեհիկ ու կոպիտ Սպարտակ Բալայանի ձեռքին, ով ամեն պահի հայհոյանքներ է թափում իր սիրած աղջկա գլխին եւ ակնհայտորեն ցուցադրում է անհարգալից վերաբերմունք (վեր ընգի տեղդ, մեկս քեզ ծեծելով կտանեմ, ջեբկիրի աղջիկ, ձեռ ես առնո՞ւմ աղջի, արա իջի արա, արա դավայ տուն անցի...): Կարծում ենք՝ մեկնաբանությունները ավելորդ են:

Հեռուստասերիալի երկու ընտանիքներում էլ, ովքեր «հարազատ» թշնամիներ են Բալայաններ-Բեկնազարյաններ, մթնոլորտը անբարոյական է, եւ պատահական չէ, որ երկու ընտանիքներից եւ ոչ մեկը անձնական երջանկություն չի գտնում: Ցավոք սրտի, ֆիլմի նեւրոզային վիճակը հաղորդվում է հեռուստադիտողներին, որովհետեւ հեռուստացույցի առաջ նստողը կամա թե ակամա հոգեբանական նույնացման կամ ապրումակցման զգացում է ունենում, կապված առանձին հերոսների, դեպքերի ու իրադարձությունների հետ: Ավելին, հեռուստասերիալի սիրահարները կարող են խորը հոգեբանական նույնացման հետեւանքով ձեռք բերել նախընտրած հերոսի այս կամ այն վարքագծի կրկնում կամ պատճենում:

Մինչեւ այսօր ֆիլմի սերիաներում դեպքերի հանգուցալուծումը տանում է միայն ու միայն դեպի անհասների ողբերգություն: Ողբերգություն են ապրում ինչպես անհատապես, այնպես էլ ընտանիքներով: Երկու ընտանիքների մոդելներն էլ, որոնք գործում են հեռուստասերիալում, ունեն դիսպերս նկարագիր: Մինչդեռ հայկական ընտանիքի անդամները ապրում են կոմպլիմենտար, փոխլրացնող հարաբերություններ: Սերիալում պահպանված չեն ազգային սոցիոմշակութային նույնականացման հիմքերը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ հասարակության հոգեւոր հիմքերը խարխլվում են: Ֆիլմում միանշանակորեն սխալ ձեւով են լուծվում ծնող-երեխա հարաբերությունների, ընկերների, ընտանեկան բարեկամության, խնամիության, սիրո զգացմունքի, ամուսնության, ծնողապաշտության ու զավակապաշտության ավանդական մատրիցիաների արդիականացման խնդիրները: Եվ սա անհետեւանք չի կարող մնալ հատկապես ֆիլմի առանձին հերոսների դերակատարներին համակրող երիտասարդության ու պատանեկան տարիքի երեխաների վրա, քանի որ ընկալված ինֆորմացիան, հոգեբանական օրինաչափությամբ չի կորչում եւ կարող է ենթագիտակցորեն ղեկավարել մարդուն կամ նրա մոտ ձեւավորել ոչ ցանկալի դիրքորոշումներ:

Գուցե թե ֆիլմի սցենարի հեղինակը շոպենհաուերյան հոռետեսությամբ է կերտում ժամանակի հերոսի իր մոդելը, բայց որ այդ մոդելները չեն կարող դրական իմաստով ներգործել ժամանակի վրա, ակնհայտ է: Ավելին, ֆիլմի անհատական (առանձին հերոսների) ու հանրային կյանքի չկայացածությունը խոսում են մեզանում առկա կամ ձեւավորվող բարոյական ճգնաժամի մասին: Մինչդեռ նույն այդ սերիալը որպես կինոմշակույթ պետք է ցույց տա ճիշտ հանրային կյանք վարելու ու մարդկանց հետ բարձր արժեքների վրա հիմնված հարաբերություններ կառուցելու մոդելը: Սերիալը ընդգծում է սոսկ առօրյա կյանքի կամ մեր ժամանակների արատավորությունը հանրային կյանքի նկարագիրը դարձնելով տրոհված, քայքայված ու պաթոլոգիկ: Այսպես, ցասումն ու հիասթափությունը հաջորդում են իրար եւ ելքը շարունակվում է մնալ անհանդուրժողականությունը:

Պետք է կարծել, որ ֆիլմի սցենարի հեղինակը հոգեբանական ողբերգության հասնող իր անզորությունից եւ ներքին չլուծված կոնֆլիկտի վրա էլ կառուցում է այդ չարաբաստիկ սերիալը: Կարելի է ասել, որ այստեղ առկա է անուղղակի ագրեսիայի ու սխալ տրանսֆերի (տեղափոխման) երեւույթը: Թե մինչեւ երբ կշարունակվի աճուրդի հանված այս հակամշակույթը ու դրանից արտածվող մղձավանջը՝ հարցական է...




**ԼՈՒՍԻՆԵ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ**
**Արցախ**

ԳՅՈՒՄՐԻ

# Հուշատախտակ՝ Ֆլորա Մարտիրոսյանի ապրած տան պատին

Օրերս լրացավ սիրված երգչուհի, ՀՀ ժողովրդական արտիստուհի Ֆլորա Մարտիրոսյանի մահվան մեկ տարին: Հայ երգի անզուգական կատարող արվեստագետի ծննդավայր Գյումրիում, Շահինյան 6ա շենքի այն բնակարանի պատին, որտեղ 1969-81 թվականներին ապրել է երգչուհին, քաղաքապետարանի նախաձեռնությամբ հուշատախտակ է փակցվել: Հուշատախտակի բացմանը ներկա են եղել քաղաքային իշխանության, արվեստի բնագավառի ներկայացուցիչներ, երգչուհու զավակները, քույրը, հարեւաններ ու քաղաքի բնակիչներ:




Ֆլորա Մարտիրոսյանի ապրեցնող երգի ղողանջները դեռ երկար պիտի հնչեն հայի հոգում: Հուշատախտակի հեղինակը՝ քանդակագործ Ֆերդինանդ Առաքելյանը, երգչուհու պատկերաքանդակը ստեղծելիս ցանկացել ու ձգտել է, որ ժողովուրդը նայելիս լսի այդ երաժշտությունը...

**Գ. Մ.**

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետեւ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը՝

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, ք. Երեւան, Նոր-Նորք համայնք, Մոլդովական փող., թիվ 20/18 հասցեյում գտնվող 213.5 ք.մ. մակերեսով բնակելի տուն, հարթակ՝ 12.6 ք.մ., հողամաս՝ 0.013303 հա: Լոտի մեկնարկային գինը՝ 60774000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդը՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 (3-րդ հարկ) հասցեում 16.12.2013թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 20.01.2013թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում 2470103078480000 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

## Վաճառվում են

խաղային ավտոմատներ գեյմինատոր՝ 6 հատ, մոդել FV880CF2,
մեկ հատը՝ 1,500,000 դրամ
Հեռ.՝ (055) 444 331, Պարգեւ

## Սրբագրում եւ խմբագրում

**ամեն ծավալի ու բովանդակության**
**հայերեն տեքստերի, գրքերի**
**E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 29.11.2013, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: